

368.4  
3 - 19

Կ. ՅՈՒԿՈՎԸՆ

ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ԱՄՊԱՐԻԶՈՒՄ ՍԻՄՈՒԼԻԱՑԻԱՅԻ  
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱՋԵՇ-  
ՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Փոխադրեց Հ. ԹՈԼՈՍՈԽԵՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԻ-Ի ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԱՊԳԱՆԶԱՐԿՆ  
ՅԵՐԵՎԱՆ - 1928

2802-10

368.4  
3-19

Կ. ՅՈՒՆԱԿԱՆ

ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ԱՍՊԱՐԻՁՈՒՄ ՍԻՄՈՒԼԻԱՑԻԱՅԻ  
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵ-  
ՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1003  
14066

Փոխադրեց Հ. ԲՈԼՈՅԱՆՅՈՒՆ

Հ Ր Ո Տ Ո Ր Ո Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն,  
ՀԱՄԽԻ ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԿՐԴԱՆԶԱՐԿՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն - 1928

09 JUL 2013

44.127

## ՀԱՌԱՋԱԲՈՆ

Վերջին ժամանակներու շատ և խռովում «հիվանդությունների և անաշխատունակության» սիմուլիացիայի մասին:

Գործնական կյանքում շատ զանձարկղներում պատահում են գեղքեր, յերբ անդիտակից ապահովագըրվածներն աշխատանքից խռուտիելու համար կամ հիվանդ են ձևացնում, կամ չափազանցնում են հիվանդությունը և այդպիսով իրենց աշխատավարձն ստանում ապահովագրական զանձարկղից:

Այս հարցը ծեծվում է վոչ միայն Մոսկվայի մամուլի եջերում, այլև բոլոր շրջանների: Բացի դրանից սիմուլիացիայի հարցը հարվածային հարց զառնալով ապահովագրական գործում, համարյա միշտ դրվում և Ապահովագրական Խորհրդակցություններում:

Ներկա գրքույկում արտացոլվում ե այս նյութը, վոր տվել ե ժամանակակից պարերական մամուլը սիմուլիացիայի վաճանգավորության և նրա գեմ կավելու միջացների մասին: Առանձնապես հետաքրքիր հազորագրություններ են բերում շրջանների լրագրերը:

Գրքույկի բովանդակությունը բաժանվում է յերեք մասի:—

Առաջին մասում ցույց են արված այն աղբյուր-

ՏԵՐՄԵՍ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔԻ ՓՈՂ. № 29  
ԳՐԱՊԵՏ. 403Բ  
ՏԻՐԱԺ 1000.

ները, վորտեղից Ապահովագրական Գանձարկդները՝  
վերցնում են իրենց դրամական միջոցները մեզ մոտ և  
արտասահմանում. ինչի վրա յեն գործազրում այդ  
միջոցները և ինչպիսի պահեստ ունեն նրանք. նաև  
այն պատճառները, վորոնց հետեանքով ապահովագրը՝  
վածները ինայուղաբար պիտի վերաբերվեն դեպի Ա-  
պահովագրական Գանձարկդների միջոցները:

Յերկրորդ մասում պարզվում է սիմուլիացիայի  
մասին հասկացողությունը: Այսաեղ բիրված են զոյու-  
թյուն չունեցող հիվանդությունների բազմապիսի կեղ-  
ծություններ և ցույց են տրված մի շարք որինակներ  
գործնական կյանքից:

Վերջապես յերրորդ մասում բերված են սիմու-  
լիացիայի, վորպես հասարակութան չարփի դեմ կոքե-  
նու մի շարք միջոցներ:

19 սպոտոսի 1925 թ.

## 1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սոցիալական Ապահովագրության միջոցնե-  
րը կազմվում են վարձու աշխատանքով ողտվող  
ինչպես պետական նույնութեան և մասնակող հիմ-  
նարկությունների, ձեռնարկությունների և արն-  
տեսությունների վճարումներից:

Բանվոր-ծառայողները միանգամայն ազատ  
են ամեն տեսակ սոցիալական ապահովագրու-  
թյան վճարումից:

Ձեռնարկություններն իրենց բոլոր բանվոր  
ծառայողների աշխատավարձի վորոշ տոկոսը  
մուծում են ապահովագրության համար: Վոր-  
քան վասասկար և բանվորի առողջության հա-  
մար արտադրությունը և վորքան վասասկար  
ե այնուեղի աշխատանքը, այնքան ավելի պիտի  
լինեն ձեռնարկության վճարումները:

Վճարումների չափը վօրոշելու համար գոյ-  
ություն ունի առանձին տոկոսների տախտակ  
ամեն մի տեսակ աշխատավարձից: Ինչպես որի-  
նակ քիչ վտանգավոր ձեռնարկությունները,

վարտեղ աշխատանքի պայմաններն ավելի բարեւհաջող են, ժամանակավոր տշխատունակության համար մուծում են  $6^0/0$ , հաշմանդամության  $3\frac{1}{2}^0/0$ , գործազրկության  $2^0/0$  և բժշկական ոգնության համար  $4\frac{1}{2}^0/0$ —ընդամենը  $16^0/0$ , իսկ ըստ արտադրության ամենից վասակար ու վըտանգավոր ձեռնարկությունները.—որինակ թունավոր նյութերի, վառողի հանքերի աշխատանքի և այլն, նույն ապահովագրական տեսակների համար մուծում են  $8^0/0$ ,  $5\frac{1}{2}^0/0$ ,  $2^0/0$  և  $6\frac{1}{2}^0/0$  ընդամենը  $22^0/0$ :

Այն բոլոր գրամտկան միջոցները, վորոնք ստացվում են ապահովագրագաճների ապահովագրության համար կոչվում են սոցիալական ապահովագրության ֆոնդեր: Բացի ապահովագրական գնարներից այստեղ մտնում են նաև տույժ (սկենյա) և տուգանքներ իրենց ժամանակին չվճարելու համար:

Յեթէ մենք վերցնենք արեմոյան պետությունների ապահովագրությունը, պիտի խոսափանվենք, վոր սոցիալական ապահովագրությունների վոչ յերկրում այնպես լիովին չի կիրառվում, ինչպես ՍիէՄ, չնայած չանրապետության անտեսական դրությանը:

Կապիտալիստական յերկրներում ապահովագրության ծախսերի խոշորագույն մասը տալիս

են իրենք բանվարները, ինչպես Դերմանիայում և Ավստրիայում նրանք վճարում են ապահովագրական վճարների  $2\frac{1}{3}\cdot\ell$ , Անգլիայում, Վենգրիայում և Նորվեգիայում վճարների կեսը, Լեհաստանում  $2\frac{1}{5}\cdot\ell$  և այլն:

Ներկայումս Խորհրդային Հանրապետության ապահովագրության որենսգրությունն առաջին տեղն ե բանում ամբողջ աշխարհում, և վոր դամիշտ ե ապացուցվում և հետեւալներով:

Փարիզում 1922 թ. մայիսի 1-ին մանիքիստացիայի դրոշակներն ունելին այսպիսի լոգունգ «Լիովիթն սոցիալական ապահովագրությունն խորհրդային Ռուսաստանի ութինակով»: Նոր ապացույց տվեց 1923 թ. Անգլիայի բանվորական կուսակցության կոնֆերենցիան, վորը միաձայն ընդունել եր բանաձեռնությունների համար գոյություն ունեցող որենքի ուղղությունների մասին պահանջելով, վոր անգլիական որենքը սուսականի հետ միանման լինի: Վերջապես Խորհրդային Սոցիալական Ապահովագրության գերազանցությունը ընդգծվում է ՍիէՄ այցելող ոտարերկրյա ոլատպամավորների կողմից:

Սակայն ինչ ե տալիս ՍիէՄ Սոցիալական Ապահովագրությունը: Խորհրդային Սոցիալական

Ապահովագրությունը ընդգրկում է ոգնության հետևյալ տեսակները.—

1. Փամանակավոր անաշխատունակության գեղքում, այն ե, յերբ բանվորը հիվանդանում ե, նա հիվանդության առաջին որից սկսած նըպաստ ե ստանում իրեն աշխատավարձի չափով մինչև առողջանալը կամ մինչև վոր չհայտնաբերվի նրա հաշմանդամությունը, վորից հետո նա արդեն անցնում ե կենսաթոշակի:

2. Հղիության և ծննդաբերության դեպքում ֆիզիքական աշխատանքի բանվորուհիներին 8 շաբաթ մինչև ծննդաբերությունը և ութ շաբաթ ծննդաբերությունից հետո արվում ե նպաստ, իրենց աշխատավարձի չափով։ Ծառայող կանայք այդ նպաստը ստանում են վեց շաբաթ մինչև ծննդաբերությունը և վեց շաբաթ նըրանից հետո:

3. Միանվագ ոգնություն յերեխայի ծնվելու դեպքում նրան խնամելու համար և նույնագես նորածնի սնունդի համար։ Սննդազրամը արվում է յերեխայի ծնվելու որից 9 ամսի ընթացքում միանվագ նպաստի  $\frac{1}{4}$ -ի չափով։ Յերեխային խնամելու նպաստը ստացվում է միանվագ, ավալ վայրէ միջին աշխատավարձի  $50\%$  չափով։

4. Գործազրկության դեպքում ապրելու միջոց չունեցող անհատներին, բայց վորում վորա-

կյալ բանվորները, զորացրվածները և մասնագիտական կրթություն ստացածները ստանում են նպաստ ավալ վայրի միջին աշխատավարձի  $30\%$  ի չափով (1 կարգ), իսկ բոլոր մասնացածները 1.ին կարգի նպաստի  $\frac{2}{3}$  ի չափով։ Բացի գրանից գործազրուցները ստանում են լրացուցիչ նպաստներ յերեխային խնամելու, սննդաբրամ և թուղման նպաստ աշխատողների հետ միևնույն պայմաններում։

5. Հաշմանդամության դեպքում—վարձու աշխատանքով զբաղված և աշխատունակությունը խեղանդամության, հիվանդությունների կամ այլ պատճառից, ինչպես ծերությունն ե, կորցրած անհատներին։ Անկարներն ստանում են կենսաթոշակի:

Նրանց չափը զանազան ե։ Դա կախված է աշխատունակության աստիճանի հետ։ Լինում են անկարներ վոչ միայն աշխատանքի միանգամայն անընդունակ, այլև իրենց խնամելու համար ուրիշի ոգնության կարիք ունեցողներ։ Լինում են և այնպիսի անկարներ, վորոնք դեռ կարող են մի փոքր աշխատել։

Այլ պատճառով բոլոր հաշմանդամ անկարները բաժանվում են 6 խմբի, վորոնց կենսաթոշակ արվում ե ավալ վայրի միջին աշխատավարձի  $50\%$  ի չափով առաջին խմբի համար,

Ապահովագրությունը ընդգրկում է ոգնության  
հետևյալ սեսալիները.—

1. Ժամանակավոր անտշխատունակության  
գեղքում, այն ե, յերբ բանվորը հիվանդանում  
ե, նա հիվանդության առաջին որից սկսած նը-  
պաստ և ստանում իրեն աշխատավարձի չափով  
մինչև առողջանալը կամ մինչև վոր չհայտնա-  
բերվի նրա հաշմանդամությունը, վորից հետո  
նա արդեն անցնում է կենսաթոշակի:

2. Հղիության և ծննդաբերության գեղքում  
ֆիզիքական աշխատանքի բանվորունիներին շ  
շաբաթ մինչև ծննդաբերությունը և ուժ շաբաթ  
ծննդաբերությունից հետո տրվում է նպաստ,  
իրենց աշխատավարձի չափով։ Ծառայող կանայք  
այդ նպաստը ստանում են վեց շաբաթ մինչև  
ծննդաբերությունը և վեց շաբաթ նրանից հետո։

3. Միանվագ ոգնություն յերեխայի ծնվե-  
լու գեղքում նրան խնամելու համար և նույն-  
պես նորածնի սնունդի համար։ Մանդաղբամը  
արվում է յերեխայի ծնվելու որից 9 ամսի ըն-  
թացքում միանվագ նպաստի  $\frac{1}{4}$ -ի չափով։ Յե-  
րեխային խնամելու նպաստը ստացվում է միա-  
նվագ, ավյալ վայրի միջին աշխատավարձի  $50\%$  չափով։

4. Գործազրկության գեղքում ապրելու մի-  
ջոց չունեցող անհատներին, ըստ վորում վորո-

յալ բանվորները, զորացրվածները և մասնագի-  
տական կրթություն ստացածները ստանում են  
նպաստ ավյալ վայրի միջին աշխատավարձի  
 $30\%$ -ի չափով (1 կարգ), իսկ բոլոր մնացածնե-  
րը 1.ին կարգի նպաստի  $\frac{2}{3}$ -ի չափով։ Բացի  
գրանից գործազրութիւնները ստանում են լրացու-  
ցիչ նպաստներ յերեխային խնամելու, սննդա-  
դրամ և թաղման նպաստ աշխատողների հետ  
միևնույն պայմաններում։

5. Հաշմանդամության գեղքում—վարձու  
աշխատանքով զբաղված և աշխատունակություն-  
նը խեղանդամության, հիվանդությունների կամ  
այլ պատճառից, ինչպես ծերությունն ե, կոր-  
ցրած անհատներին։ Անկարներն ստանում են  
կենսաթոշակի։

Նրանց չափը զանազան է։ Դա կախված է  
աշխատունակության աստիճանի հետ։ Լինում  
են անկարներ վոչ միայն աշխատանքի միան-  
գամայն անընդունակ, այլև իրենց խնամելու  
համար ուրիշի ոգնության կարիք ունեցողներ։  
Լինում են և այնպիսի անկարներ, վորոնք գեռ  
կարող են մի փոքր աշխատել։

Այդ պատճառով բոլոր հաշմանդամ անկար-  
ները բաժանվում են 6 խմբի, վորոնց կենսա-  
թոշակ արվում ե տվյալ վայրի միջին աշխա-  
տավարձի  $50\%$ -ի չափով առաջին խմբի համար,

այս կենսաթոշակի<sup>2</sup> չի չափով յերկրորդ խմբի  
համար և կեսը՝ յերրորդ խմբի համար:

6. Ապահովագրվածներն ոգտվում են ձրի  
և առաջին հերթին բժշկական ոգնությամբ։  
Ապահովագրվածների ընտանիքի անդամները  
նույնպես ոգտվում են բժշկական ոգնությամբ  
գործարանային բուժաբաններում և տանը։ Աշխատավորների համար տրամադրվում են նաև  
սանատորիաներ, կուրորաներ, հանգստյան և  
հաշմանդամների տներ։

7. Բնտանիքի կերակրողի մահվան կամ  
նրա անհայտ բացակայության դեպքում կենսաթոշակով ապահովվում են նրա խնամքի տակ  
գտնված և ապրուստի միջոց չունեցող ընտանիքի անդամները։

8. Թաղման նպաստը արվում և ապահովագրվածի մահվան դեպքում և նույնպես նրա  
ինամքի տակ գտնվող ընտանիքի անդամի մահվան դեպքում։

Աշխատավարձը կորցնելու ամեն մի դեպքում բանվորը կարող և դիմել ապահովարկող և  
վերջինս նրան կոզնի։

Ապահովագրական գանձարկոները, վորպես  
բանվորական կազմակերպություններ, առանց  
բանվորի անմիջական աջակցության չեն կարող  
կատարել իրենց վրա դրած բոլոր պարտակա-

նությունները։ Այդ աջակցությունը Գանձարշ  
կը դներին պետք է հենց ներկայումս։

Նպաստ և կենսաթոշակ տալու համար նը-  
րանք շատ միջոցներ են նախատեսնում, բայց  
գժվար և ստանալ այդ միջոցները լրիվ ու իր  
ժամանակին և յերբեք չի հաջողվում այդ բա-  
նին հասնել։ Իսկ միջոցները նախատեսնված  
ծախսը հազիվ կարող են ծածկել և ահա հենց  
այստեղ և, վոր բանվորները կարող են ոգնել  
Ապահովագրական գանձարկոներ։

Նվազեցնել ապահովարների հին պարտքի գու-  
մարը, ստանալ ապահովարները լրիվ 100% ով և  
հենց զրտնով շթորնել, վոր նպաստների և կեն-  
սաթոշակների նորմաներն իջնեն։

Ցեղ ելի ինչպիսի ոգնության կարիք ե-  
զգում Ապահովարկողը։ Բոլոր ապահովագրված-  
ները վոչ միայն պիտի ոգնեն նրան միջոցների  
գանձմանը, այլև պիտի հսկեն, վոր այդ միջոց-  
ները ծախսվեն կանոնավոր և ավելի կարիքա-  
վորների վրա, կորիվ մղելով հասարակական  
գրամմերը վահանող չարագործությունների դեմ։

Յուրաքանչյուր զիտակից բանվոր չպիտի  
մոռանա, վոր Ապահովագրական գանձարկողը, դա-  
իր գանձարկոն և, իր հարազատ զավակը և վոր-  
քան ամուր և այդ գանձարկողը, այնքան լավ և  
իրեն համար։

Առանձնապես ուժեղ պայքար պիտի մղել նրանց գեմ, վորոնք շահադիտական նպատակով, խարեյությամբ, փաստաթղթեր կեղծելով և ամեն տեսակ սուտ ձևացումներով, առանց կարիք ունենալու խլում են ապահովագրական գանձարկղի զրամները:

Փոխարեն աշխատելու և աշխատավարձն աշխատանքի տեղից ստանալու, նրանք սուտ հիվանդ են ձեռնում և առանց աշխատանք կատարելու կամենում են աշխատավարձն ստանալ Ապահովագրական գանձարկղից:

Այդպիսի «հիվանդները» կոչվում են սիմուլիան տն եր:

## 2. ԽՆՉԵ Ե ՍԻՄՈՒԼԻԱՅԻԱՆ

«Սիմուլիացիա» բառը վերցրած է լատինական լեզվից: Այդ լեզուն այժմ համարվում է մեռած, քանի վոր նրանով չի խոսում վոչ մի ազգ: «Սիմուլիացիա» բառը նշանակում է ձեռքացում: Թեև այդ խոսքը վերցրած է մեռած լեզվից, սակայն նրան հաճախ ենք հանդիպում և յեթե մենք հետեւնք սիմուլիանսերի բազմատեսակ արարքներին, դրանում կհամոզվենք:

Սիմուլիացիան սկսված է շատ վաղուց: Սիմուլիացիայի դեպքեր պատահել են և մարդկու-

թյան հին պատմության մեջ: Հասարակության մեջ իրեն զիրքի բարձրացման համար մարդը շատ հաճախ է դիմում մտերմության, կարեկ ցության և քաղաքական համոզմունքների սիմուլիացիային: Սիմուլիացիա յեւ անում ամեն տեսակի դժբախտ զեպքերի, որինակ կողոպուտի, կյանքի վտանգավորության և այլն:

Այդ բոլորն արվում է ծածկելու համար այն վեանները, վորոնք իրապես չի կրել գոյություն չունեցող տուժողը:

Առաջին և ավելի ցայտուն դեպքեր հիվանդության սիմուլիացիայի յերեան յեկան պարագիր զինվորություն մտցնելուց հետո: Զինվորական ծառայության ծանր պարտականություններն ու զրկանքները միանալով կյանքի վատանգի յենթարկվելուն, ստիպում եյին միջոցներ վնարել ծառայությունից խուսափելու համար:

Զինվորականները և կալանվածներն իրենց բախտի թեթևության համար յենթարկում եյին իրենց ամեն տեսակի կեղծիքի: Նրանք գործ եյին ածում և խաբելու ամենահասարակ ձեռքը. որինակ կուչ եյին գալիս, վորպեսզի «չափի» չգան կամ շնչառությունը կտրում, վորպեսզի կըծքի լայնությունը պակասեցնեն:

Զեռքերի, վոտների կամ մատների շփու-

մով նըանք առաջ են բերում կաշվի հիվանդություններ, իսկ գրգոռ նյութեր քսելով առաջացնում եյին վերքեր և եկղեմա։ Զեացնում եյին թե իբր ցավում են մկանունքները, վուկըները ծնկերը, վորի պատճառով առաջ ե յեկել պարանոցի ծոռւթյուն (ծուռփիզ), կաղություն (կաղիկ, չոլախ) և այլն։

Առանձին փայտե գործիքով առաջացնում են գրիժա (աղեթափություն—փորի պատըռագածք), Խմում են սկիբիտար և ստանում յերիկամունքների բորբոքում։

Նույնիսկ պատահում եր, վոր միզափամփուշը որով ուռցնում և ձվաների ջրացում եյին (ջրուալաղ—վաղյանկա) ձևացնում։ Յերբեմն ընկնուվոր եյին ձևացնում կամ կաթվածահար յեղած։ Մի զինվոր ամբողջ յերկու տարի սիմուլիացիա յեր անում, իբր թե չի կարողանում վեր կենալ ու ման գալ, Փորձեցին հետեւ նըան հետեյալ պայմաններում։

Յերկու որ վոչինչ չեյին տալիս ուտելու, իրեն նստեցրել եյին սենյակում մի դարակի տակ, վորի վրա զբված եյին բազմատեսակ ուտելեղեններ, վորպեսզի այդ գտրակի վրայից վերցնել մի բան ու ուտել, զինվորին հարկավոր եր միայն վոտքի կանգնել ու ձեռը մեկնել։ Նաքաղցին դիմացավ և այդ հրապուրող կերակուր-

ներին չկպավ, միայն իրեն մատնեց նավիվրա հրդեհի ժամանակ, ամբողջ ուժով վազելով դեպի ազատարար նավակը։

Բայց վոչ թե միայն զինվորական իշխանությունն եր հանդիպում սիմուլիացիայի դեպքերի։ Վաղաքացիական ու քաղաքական դատարանները հաճախ քննում եյին այնպիսիների դործերը, վորոնք ամեն կերպ աշխատում եյին խուսափել անդուրեկան պարտականություններից կամ պատժից, վորպեսզի չբանտարկվեն, կալանատուն չընկնեն կամ դատարան չգնան, վորպես վկա։

Առանձնապես սիմուլիացիան ծաղկեց սոցիալական ապահովագրության առաջ գտլուց հետո։ Ակամայից հարց և ծագում, թե ինչու հաճախ և կրկնվում սիմուլիացիան և ինչու այնքան շատ են անբարեխիզ արարքները։

Մի գերմանական բժիշկ ապահովագրության նկատմամբ կատարվող սիմուլիացիան բացարում ե «Ճշմարտության զգացմունքի կորուստով դեպի կարող ու հարուստ ապահովագրական հիմնարկությունը»։ Լսում եք «դեպի կարող ու հարուստ»։

Իսկ մեր նորածին Ապգանձարկները իրենց միջոցներով գեռ այնքան թույլ յեն, վոր միթե այստեղ ել մուտ և գործում «Ճշմարտության

զդացմունքի կորուստը» և վոր հարստութան դեմ:

Միթե դրա մեջ ևս Ապգանձարկղներ թաւանող «պարոնայք սիմուլիատները» տարակուսավում են, կը նշանակե նրանց մեջ ինքնամոլությունը ու յեսասիրությունը ամենից բարձր են դասվում:

Սիմուլիացիոյի չորս գլխավոր խումբ.

1. Սիմուլիացիոյի բազմաթիվ աեսակները կարելի յե բաժանել (Պ. Զ ա ն դ) չորս գլխավոր խմբի:

1. Խոկական սիմուլացիա, այն ե գոյություն չունեցող հիվանդության հնարում: Այս ձեզ պատճեռում ե վոչ հաճախ, վորովհետեւ հիվանդության հնարումը դժվար ե լինում. որինակ ընկնավորությունն այնքան ել հեշտ չե. այստեղ պահանջվում ե բավական գիտություն, ճարպկություն և ամենազլիսավորն ե այնքան ել անվտանգ չե:

Ամենից հաջող սիմուլացիա յեն անում իշխանը, ումատիզմը և այլն, այսինքն, այնպիսի հիվանդություններ, վորոնք ավելի դժվար են յենթարկվում ստուգման:

2. Արհեստական հիվանդություններ: Այս-

տեղ մենակ դերասանությունը քիչ ե, պետք են և այս կամ այն նյութերը, վորպեսզի հիվանդություն առաջ բերվի:

3. Սուտ վերագրում: Սա հիմնված ե լինում կեղծիքի վրա: Որինակ՝ մարդ մի հիվանդություն ե ունեցել, վոր նրան չի նեղացրել, յենթադրենք զրիժա: Հանկարծ պատահում ե, վոր նա վայր ե ընկնում ու թեթև ջարդվածք ստանում, սակայն ահա սիմուլիանար առում ե, վոր իր ունեցած գրիժան այդ դեպքի հետեւ վանքն ե:

Պատահում են գեղքեր յերբ սուտ դատողությունների հետևանքով գժբախտ գեղքի և նրա հետևանքի մեջ յեղած կապը սխալ ե բացարփում: Որինակ՝ վորովայնի ճգմումը իբր թե առաջ ե ըերել սուտանակ (արիպեր), իսկ ծանրություն բարձրացնելուց առաջ ե յեկել փորտհարինք (դեղինտերիա): Այստեղ ակնհայտ ե դժբախտ գեղքն ու առողջության խանգարվածությունը, չկա միայն պատճառաբանված կապ նրանց մեջ, իսկ առանց դրան հնարավոր չե հիվանդություններ հետևանք համարել պատճառած գեղքի:

4. Վերջապես որգանիզմում գոյություն ունեցող խանգարումների չափազանցում: Սի-

մուլիացիայի այս վերջին տեսակն ամենից շատ  
տարածված է:

Բժիշկը զգուշ պետք ե լինի, վորպեսզի  
այս կամ այն տեսակի սիմուլիացիան պարզվի:  
Բարդ ե այս գործը: Նա միևնույն ժամանակ  
պահանջում է, վոր յեզրակացություններ զգու-  
շությամբ հանվեն, հակառակ դեպքում սիմու-  
լիանտ կարելի յե համարել և խսկական հիվան-  
դին—վերջինս վոչ մի դեպքում թույլատրելի չե:

Նույն իսկ բժիշարություններով վորոշելու  
ժամանակ, թե իսկական հիվանդն ե կանգնած  
բժշկի առաջ թե սիմուլիանող, փորձը ցույց ե  
տալիս, վոր բժշկի զգուշ աշխատանքի դեպքումն  
ել սիմուլիացիայի դեպքերը բավականին հաճախ  
են լինում: Նրանք մեծ թափով խուսմ են ապ-  
գանձարկղի կարողությունը, ապա ուրեմն նրանց  
դեմ պիտի Հայտարարել ամենաուժեղ կոփվը.  
Վոր սիմուլիացիայի դեպքերը իսկապես քիչ չեն,  
ցույց են տալիս մեր ապահովագրական գան-  
ձարկղների գործնական կյանքի շատ որինակ-  
ները:

„Գործազուրկներ“, „Տնասերեր“, „Դրամատերեր“

Սիմուլիանտների մեջ բազմատեսակ տիպեր  
կան: Սկսենք նրանցից, ովքեր գտնվում են  
«գործազուրկներ» շարքում:

«Ապահովագրական Հարցեր»-ի 1924 թ. № 16  
ընկ. Բ. Ֆայնգոլդը ցույց տալով գործազրկության  
աճումը և ապահովագրական այդ նպաստի ավե-  
լացումը, Մոսկվայի գանձարկղի աշխատանքների  
փորձի հիման վրա, վորոշում ե գործազուրկ  
սիմուլիանտների հետեւյալ տիպերը: Տների ու  
անշարժ գույքի նախկին տերեր, վորոնք ներկա-  
յումս զբանց վարձակալներին են հանդիսանում:  
Ինտելիգենտ արհեստի անհատներ, ինչպես  
բժիշկներ, փաստաբաններ և այլն, վորոնց աշ-  
խատավարձը չի խանգարում ունենալ տանն  
սպասուհի կամ ծառա, իսկ ամառն ամարանց  
ձեռք բերել: Այդպիսի մարդիկ պաշտոնի մտնե-  
լուց հետո, առանց խղճի խայթոցի, շարունա-  
կում են ստանալ ապահովագրական նպաստ,  
վոր ակնհայտ հանցագործություն ե:

### Նախկին մարդիկ

Առանձին պիտի դնել ցարական պոլիցիա-  
յին, ժանդարմերիային և հին կառավարության  
բանապետների շարքին պատկանող՝ ներկա-  
յումս անգործ ու սնանկացած նախկին ազնվա-  
կանների խմբերը:

Նրանցից վոմանք իրենցից ներկայացնում  
են վոչ-աշխատավորական ելեմենտ, վորոնք նը-

պաստով ոգտվում են միայն աշխատավորական գասին պատկանելու համար:

Մյուսներն ել թեպետ սկսել են աշխատավորական կյանք, համենայն գեպս ոգտվում են նպաստով, իրենց տնտեսական դրությունը գործազրկությունից հետո սկզբնական ժամանակում բարելավելու համար և գուցե հույս չունենալով իրենց պաշտոնի յերկարատեսության վրա, չեն ուզում խզել կապերը աշխատանքի բորսայի և ապահովագրական գանձարկղի հետ:

Մի կողմ են մնում նրանք, ովքեր արտոնություններ ու նպաստ ստանալու համար զիմում են զեղծարարության, Յերբեմն թվածխարեցայության բոլոր տեսակները կրում են մի ընդհանուր անուն „սիմուլիանս“, վորովհետեւ նրանք ունեն ընդհանուր շաղկապող մի յերեվույթ—ձգտում վորեւ արտօնություն ստանալու համար և առողջության դրության սուսակացումով վորեւ տեսակ շահվելու համար:

### Դիստրիբյացիա

Այժմ խոսենք աշխատողների և ծառայության մանողների մասին: Ռազմովսկո, Սիմոնովսկի շրջանի գանձարկղի հետազոտումը ցույց տվեց, վոր հիվանդության սիմուլիացիայի փոխարեն

նկատվում է առողջության սիմուլիացիայի դեպքեր (դիստրիբյացիա), այսինքն բոլորովին հակառակ յերեսություն:

Այս ձերին դիմում են վորոշ ծառայության ընդունվելու նպատակով, իսկ հետո զանձարկղի վզովն ընկնելու, այն եւ ժամանակավոր աշխատունակությունը կորցրած մշտական թոշակառու դառնալ:

Ենինգրադի «Կրամնայա Գագետա»-ն 27 թ. մարտի 14-ին հաղորդում է հասարակության դրամների թալանի նոր ձեր մասին—ծանոթներին ու բարեկամներին, վորպես վարձու աշխատողների, ապահովագրելու միջոցով:

Մի քաղաքացի բերում է իր մոտ իր ծանոթին, ապահովագրում է նրան վորպես աղախին, մուծելով 2 ռ. 56 կ. և մի քանի որից հետո պառկեցնում է նրան հիվանդանոց:

Այստեղ հայտնաբերվում է վոսկրի տուբերկուլյոզ, Համարյա կես տարի բժշկվում է հիվանդը, ստանում անաշխատունակության նըպաստ և աշխատում է անցնել մշտական հաշմանդամության:

Մինչդեռ վերոհիշյալ քաղաքացին հիվանդացած այդ աղախնի տեղ վոչ վոքի չի վերցընում, քանի վոր ընդհանրապես ծառայողի կարիք չի ունենում:

պաստով ոգտվում են միայն աշխատավորական գասին պատկանելու համար:

Մյուսներն ել թեպետ սկսել են աշխատավորական կյանք, համենայն զեպս ոգտվում են նպաստով, իրենց տնտեսական դրությունը գործազրկությունից հետո սկզբնական ժամանակում բարելավելու համար և գուցե հույս չունենալով իրենց պաշտոնի յերկարատեսության վրա, չեն ուզում խզել կապերը աշխատանքի բորսայի և ապահովագրական գանձարկղի հետ:

Մի կողմ են մնում նրանք, ովքեր արտոնություններ ու նպաստ ստանալու համար դիմում են զեղծարարության, Յերբեմն թված խաբերայության բոլոր տեսակները կրում են մի ընդհանուր անուն „սիմուլիանի“, վորովհետեւ նրանք ունեն ընդհանուր շաղկապող մի յերեվույթ՝ ձգտում վորեւ արտոնություն ստանալու համար և առողջության գրության սուսաձեցումով վորեւ տեսակ շահվելու համար:

### Դիսիմուլիացիա

Այժմ խոսենք աշխատողների և ծառայության մտնողների մասին: Ռազմակողությունների շրջանի գանձարկղի հետազոտումը ցույց տվեց, վոր հիվանդության սիմուլիացիայի փոխարեն

նկատվում ե առողջության սիմուլիացիայի դեպքեր (գիսսիմուլիացիա), այսինքն բոլորովին հակառակ յերկույթ:

Այս ձեին գիմում են վորոշ ծառայության ընդունվելու նպատակով, իսկ հետո զանձարկղի վզով ընկնելու, այն եւ ժամանակավոր աշխատունակությունը կորցրած մշտական թոշակառու դառնալ:

Եենինգրագի «Կրասնայա Գաղետա»-ն 27 թ. մարտի 14-ին հաղորդում ե հասարակության դրամների թալանի նոր ձեի մասին—ծանոթներին ու բարեկամներին, վորպես վարձու աշխատողների, ապահովագրելու միջոցով:

Մի քաղաքացի բերում ե իր մոտ իր ծանոթին, ապահովագրում ե նրան վորպես աղախին, մուծելով 2 ռ. 56 կ. և մի քանի որից հետո պասկեցնում ե նրան հիվանդանոց:

Այստեղ հայտնաբերվում ե վոսկրի տուքերկույզ: Համարյա կես տարի բժշկվում և հիվանդը, ստանում անաշխատունակության նըպաստ և աշխատում ե անցնել մշտական հաշմանդամության:

Մինչդեռ վերոհիշյալ քաղաքացին հիվանդացած այդ աղախնի տեղ վոչ վոքի չի վերընում, քանի վոր ընդհանրապես ծառայողի կարքիք չի ունենում:

Նկարագրված դեպքին նմանում են այս  
դեպքերը, յերբ հրապարակ են գալիս ուրիշ  
տեղ բերված մարդիկ. ահա այդ դեպքերից մեկը.

Մոսկվա յե գալիս քեռին իր սանիկի մոտ  
հյուր և հիվանդանում ե. սանիկն ապահովա-  
գրված եր և այսպես ե սարքում գործը, իրը  
հիվանդը հենց ինքն ապահովագրվածն եր. Քե-  
ռին հանկարծ մեռնում ե, պետք եր մահվան  
վկայական ստանար. ահա այստեղ ամեն ինչ  
բացում ե, քանի վար ինքը սուս հիվանդն ե  
գալիս այդ վկայականը խնդրելու:

Բերովի հիվանդների դեպքերն առանձնա-  
պես գործածական են նզի կանանց շրջանում։  
Ասում են կան այնպիսի շրջիկ դերասանուհի-  
ներ, վորոնք զանազան ազգանուններով և զա-  
նազան փաստաթղթերով սիստեմատիկ կերպով  
ներկայանում են բժշկական վերահսկիչ հանձ-  
նաժողովներին, վորպեսզի «իրավունք» ստանան  
այդպիսի անորեն ստացումներով դատարկելու  
գանձարկը։

Արձակուրդը մերժելու դեպքում  
„սպառ նացողները“

Պատմենք մի դեպք, թե ինչպես սիմու-  
լիանուի գործը մի անդամ վիճեց։ Բժիշկը կա-

րողացել եր խնայել գանձարկի դրամները,  
բայց դրա համար ստացել եր «հիվանդից» նա-  
խազգուշացում։

— Բուժարան. — Հիվանդը հայտնում ե, վոր  
ցավում ե ցուցամատը։ Հավատարմատար բժիշկը  
առաջարկում ե ցույց տալ հիվանդ ցուցամատը։  
Հիվանդը վոտքը գումար ե աթոռի վրա։ «Այ, տես-  
նում ես, յեղունգը վայր ե ընկել և դեռ գուրս  
չի յեկել»։ «Ուրեմն դա յե ձեր ցուցամատը»,  
հարցնում ե հավատարմատար բժիշկը. «Այո»,  
պատասխանում ե հիվանդն առանց տատանվելու։

«Լավ, այդպես ել մենք կդրենք, վոր ձեր  
վոտքի վրա կա ցուցամատ»։ Բայց ինչ ե պա-  
տահել նրան, յեղունգն ընկել ե և չեմ կարո-  
գանում, ման գալ»։ «Լավ, յերեսդ շուռ տուր  
ու վոտքիդ մի նայիր և տսա, թե ինչ ցավ ես  
զգում»։ «Վոչ մի ցավ չեմ զգում»։ «Շատ  
լավ. ընկեր քարտուղար, գրեք թերթի մեջ, վոր  
առողջ ե և կարող ե աշխատանքի անցնել», ա-  
սում ե հավատարմատար բժիշկը։

— Ինչպես թե առողջ ե, յերբ հազիվ եմ  
կարողանում քայլել, — զարմանում ե հիվանդը։  
— «Շատ պարզ, յես շոշափեցի ձեր մտար, իսկ  
դուք նույնիսկ չշարժվեցիք, հետեալոս զուք  
բոլորովին տոսղ եք և չպետք ե սիմուլացիա  
ահել»։

Գործողությունը վերջանում է նրանով,  
կոր հիվանդը հանդիմանում է բժշկին, մեղա-  
դքելով նրան՝ «տեր ես դառել, հրամայում ես»,  
ու սպառնում „բժշկին արձակելու» հարցը  
դնել տարեկան ընդհանուր ժողովում:

Հարկավոր ե, վորքան կարելի յե, սիմու-  
լիացիայի. շատ գեպքեր ու արարքներ հրատա-  
րակել. դա ոգուտ ե նրանց գեմ կովելու հա-  
մար: Ընկերները կծանոթանան զանազան հնա-  
րումների հետ, վորոնց միջոցով անբարեխիղճ  
մարդիկ ոգտվում են գանձարկղի սուղ միջոց-  
ներից—միջոցներ, նախառեանված վոչ թե այս  
գեպքերի համար, այլ հիվանդությամբ տառա-  
պաղների և բոլոր նրանց համար, վորոնց դժբախ-  
տություն ե պատահել:

Վորքան շատ իմանանք, թե ինչպես և վոր-  
տեղ ե յերեան գալիս սիմուլիացիան, այնքան  
հեշտ հնարավոր կինի կովել նրանց դեմ: Մի-  
մուլիանտների կողմից գանձարկղին պատճառած  
չարբին ծանոթ մարդկանց թիվը վորքան շատ  
լինի, իսկ այդ թվի մեջ պիտի մտնեն բոլոր  
ապահովագրվածները, այնքան հաջող յելք կու-  
նենա սիմուլիացիայի գեմ մզգող պայքարը:

Յեվ յեթե բժշկության գիտության ներկա  
գլուխյամբ սիմուլիանտների մի չնչին մասը կը  
մնա չհայտնաբերված, մյուս մեծամասնություն  
կազմող մասն արմատախիլ կինի:

Լրացուցիչ աշխատանի կատարողներ

Ահա մի զետք փականագործի կյանքից:  
Դեռ յերեկ ոռնիկ ստացավ, իսկ այսոր գլուխը  
ցավում է, զրամներն ողու վրա ծախսվեցին,  
այնինչ մտածում եր ավելացնել տնտեսած գու-  
մարի վրա և կնոջ համար վերարկու գներ: Ինչ  
անել հիմա: Պատահում ե նրա բարեկամը, վո-  
րը և կարեկցությամբ խորհուրդ ե տալիս „լավ  
կիներ, վոր դու մեր բժշկի մոտ գնայիր, մի  
յերեք որով արձակուրդ ստանայիր, ու տոննը  
նստեյիր, քեզ համար աշխատեյիր”:

Փականագործը լսում է բարի խորհուրդը  
և գնում բուժաբան: Բուժաբանում քննում են.  
աշքերը կապտած ե, լեզուն սպիտակ: Տաքու-  
թյան աստիճանը վորոշելու համար ջերմաչափ  
են զնում: Աննկատելի կերպով մեր հիվանդը  
ջերմաչափը կոխում է յեռման ջրի մեջ, վոր  
պատրաստած եր գործիքներն ախտահանելու  
համար, և ապա ցույց տալիս բժշկին: Բժիշկը  
տեսնելով, վոր ջերմաչափը 39,8° և ցույց  
տալիս, տալիս ե Ն որով արձակուրդ:

Պատվերներ շատ կան և մեր սուտ հիվան-  
դը տանը նստած աշխատում ե: Ահա յերկու-  
որից հետո գալիս ե բժշկական հանձնաժողովի  
գործակալը ձեռքին բանած հիվանդանոցային

Գործողությունը վերջանում է նրանով,  
վոր հիվանդը հանդիմանում է բժշկին, մեղա-  
գրելով նրան՝ «տեր ես դառել, հրամայում ես»,  
ու սպառնում „բժշկին արձակելու” հարցը  
դնել տարեկան ընդհանուր ժողովում:

Հարկավոր ե, վերքան կարելի յե, սիմու-  
լիացիայի. շատ գեպքեր ու արարքներ հրատա-  
րակել. դա ոգուտ ե նրանց դեմ կովելու հա-  
մար: Բնկերները կծանօթանան զանազան հնա-  
րումների հետ, վորոնց միջոցով անբարեխիղճ  
մարդիկ ոգտվում են գանձարկղի սուղ միջոց-  
ներից—միջոցներ, նախատեսնված վոչ թե այս  
գեպքերի համար, այլ հիվանդությամբ տառա-  
պազների և բոլոր նրանց համար, վորոնց դժբախ-  
տություն ե պատահել:

Վորքան շատ իմանանք, թե ինչպես և վոր-  
տեղ ե յերեան գալիս սիմուլիացիան, այնքան  
հեշտ հնարավոր կլինի կովել նրանց դեմ: Սի-  
մուլիանտների կողմից գանձարկղին պատճառած  
շարիքին ծանոթ մարդկանց թիվը վորքան շատ  
լինի, իսկ այդ թվի մեջ պիտի մտնեն բոլոր  
ապահովագրվածները, այնքան հաջող յելք կու-  
նենա սիմուլիացիայի դեմ մզգող պայքարը:

Յեվ յեթե բժշկական գիտության հերկա-  
գրությամբ սիմուլիանտների մի չնչին մասը կը  
մնա չհայտնաբերված, մյուս մեծամասնություն  
կազմող մասն արմատախիլ կլինի:

Լրացուցիչ աշխատանք կատարողներ

Ահա մի գեպք փականագործի կյանքից:  
Դեռ յերեկ ոսճիկ ստացավ, իսկ այսոր գլուխը  
ցավում ե, դրամներն ողու վրա ծախսվեցին,  
այսինչ մտածում եր ավելացնել տնտեսած գու-  
մարի վրա և կնոջ համար վերաբերու գնել: Ինչ  
անել հիմա: Պատահում ե նրա բարեկամը, վո-  
րը և կարեկցությամբ խորհուրդ ե տալիս „լավ  
կլիներ, վոր դու մեր բժշկի մոտ գնայիր, մե  
յերեք որով արձակուրդ ստանայիր, ու տոնը  
նստեյիր, քեզ համար աշխատեյիր”:

Փականագործը լսում է բարի խորհուրդը  
և գնում բուժարան: Բուժարանում քննում են.  
աշքերը կապտած ե, լեզուն սպիտակ: Տաքու-  
թյան աստիճանը վորոշելու համար ջերմաչափ  
են գնում: Աննկատելի կերպով մեր հիվանդը  
ջերմաչափը կոխում է յեռման ջրի մեջ, վոր  
պատրաստած եր զործիքներն ախտահանելու  
համար, և ապա ցույց տալիս բժշկին: Բժիշկը  
տեսնելով, վոր ջերմաչափը  $39,8^{\circ}$  ե ցույց  
տալիս, տալիս ե 7 որով արձակուրդ:

Պատվերներ շատ կան և մեր սուտ հիվան-  
դը տանը նստած աշխատում է: Ահա յերկու  
որից հետո գալիս ե բժշկական հանձնաժողովին  
զործակալը ձեռքին բանած հիվանդանոցային

թերթիկը, վորի վրա գրված էր „Հավանորեն  
սիմուլիանտ եւ և ամեն ինչ պարզգում եւ:

### Մեռած մարդկանց անցկացնելը

„Բարոչայա Գաղետա“-ն № 64, 1924 թ.  
մարտի 20-ին պատմում եւ մի գանձարկղի  
քարտուղարի շահավետ գործունեցության մասին՝  
Նկատվել են, վոր գանձարկղում սովորականից  
ափելի դիմումներ են ստացվում յերեխայի  
ծննդյան միանվագ նպաստ ստանալու համար:

Գանձարկղի քարտուղարը բոլորին ապահովագրում եւ, հաշվի յե առնում ու նպաստ տալիս, իսկ դրամներն ստանում եւ ինքը հավատարմագրով։ Մոտ որերում քսան տարի յերեխա չունեցող ամուսիններից ծնվում եւ Պետյան և վոչ թե մենակ, այդ կոլյայի Հետ միատեղ, իսկ նրանց համար նպաստն ստանում եւ հավատարմագիր ունեցող նույն քարտուղարը։

Վերստուգիչ հանձնաժողովը պարզում եւ,  
վոր քարտուղարը կեղծում եւ ծննդաբերության  
փառտաթղթերը—պահանջաթերթում անց ե կացնում „մեռած“ Հոգիների և նրանց անունով  
նպաստ ստանում ու փառագոր կյանք վարում։

Այս յերեսույթը լայն ծագալով ե գրված յեղել և ապահովագրական դրամները վատնվել։

Ահա և „թերթիկավորների“ (հիվանդանոցային  
թերթիկներ ընդունողների) գործը։

Սրանց վրա կարող եյին հսկել գործարկում-  
ները, սակայն այդ հսկողությունը կամ բոլո-  
րովին չկա, կամ շատ թույլ ե։ Յերբեմն հան-  
գամանքներն ել են նպաստում սիսալ թերթիկ-  
ներ տալուն. բժիշկները չափազանց ծանրա-  
բեռնված են լինում։ Մի բուժարանի հիվան-  
դապահ կին նկատել ե, վոր „թերթիկավորները“  
թափվում են բժշկի գլխին այնպիսի համառու-  
թյամբ, վոր վերջինս ստիպված ե լինում զիջել։

Ինչ կասեյին թերթիկների սիրահարները,  
յեթե նրանց նկատմամբ կիրառվեր 1912 թ.  
հին ապահովագրական որենքը, ըստ վորի Ռու-  
սաստանում ապգանձարկղները հիվանդության  
առաջին յերեք որվա համար նպաստ չեյին տա-  
լիս, իսկ մացցած ժամանակի համար տալիս  
եյին միայն աշխատավարձի մի մասը։ Նույնն  
արվում ե և ներկայումս բոլոր յերկրներում,  
բացի ԽՍՀՄ։

### Անդուրագրերի գնում

Ահա և իսկական զեղծարարությունն ։ „Բա-  
րոչայա Մոսկվա“ թերթում (10 ապրիլ 1922  
թ. № 82) բանթղթակիցը հաղորդում ե մի

ալտափիսի դեպքը Բանվորուհին, հղիության առաջիկ, չորս ամիս արձակուրդ եւ գնումը: Այդ ժամանակամիջոցի համար նրա ոռմիկը դուրս պիտի գրեն աշխատավարձի վերջին ամսի նորմայով: Գործարանում աշխատավարձը տրվում է հատուկ անդորրագրերով, վորոնք տրվում են աշխատավորուհիներին ըստ նրանց արտադրած մթերքի քանակի:

Արձակուրդ գնացողը գնում է վերջին ամսվա անդորրագրերը: Բանվորուհիներն ուրախությամբ վաճառում են, քանի վոր արձակուրդ գնացողն անդորրագրի իսկական արժեքից ավել եւ վճարում, որինակ՝ 10 ոռություն փոխարեն նաև տալիս է 12—15 ո., իսկ ինքը չորս ամիս շաբանակ այդ անդորրագրերով ավելի խոշոր գումար եւ ստանում:

Ում եւ ավելի դյուրին բացել նման զեղծարքությունը և նախազգուշացնել գանձարկղին: յեթե վոչ, նրա հետ միատեղ աշխատող ընկերներին:

### Հդի կանանց կուտակում

Ամենուրեք նկատվում են ապդանձարկղներին վասողներ: Հեռավոր Սիրիքից հաղորդում են, վոր Զիտա քաղաքում նկատվել եւ

տարօրինակ յերեսույթ: Մյուս քաղաքների հետ համեմատած այւտեղ գուրս եւ յեկել 240 ծնընդկաններով ավելի. ինչումն եւ բանը: Բժըշկական փորձը ցույց եւ տվել, վոր զյուղից քաղաք են գալիս ու անային ծառայության մրտնում բազմաթիվ հզի կանայք, վորոնք զանձարկղում ապահովագրվելուց հետո ծնում են, ստանում իրենց նպաստը և վերադառնում դյուզ: Նրանց գրավողն այն առավելություններն են, վոր տալիս եւ խորհրդային որենսդրությունը մայլերի իրավունքի պահպանությանը:

### Անզուծների հարձակումն

„Նեֆտո-Բարոչի“ թերթը Գրողնի քաղաքից հաղորդում եւ, վոր բժիշկահոկիչ կոմիսիայով հուլիս—սեպտեմբեր ամիսներում անցնողներից 345-ը յեղել են այնպիսիները, վորոնց ասված եւ յեղել „զու բոլորովին առողջ են, գնա աշխատիր“ և նրանք գնացել են աշխատանքի, բայց և այնպիս նրանցից առեն մեկը վորոշ գումար եւ պոկել գանձարկղից ի հատուցումն բուժարանում քարշ գալու, թերթիկը լրացնելիս բուժարանում հերթի սպասելու համար, զրասենյակ գնալու համար կորցրած ժամանակի: Այդ զումարով 10. 15 իսկական հի-

վանդ կարելի յեր ուղարկել կուրորտներ ու  
սանատորիաներ:

Այս բոլորի հետեանքով բանվորական հա-  
զարավոր որեր են ապարդյուն կորչում և այդ  
այն ժամանակ, յերբ մեր արտադրությունը  
բարձրացնելու համար հազարավոր ազնիվ բան-  
վորներ կաշվից են դուրս գալիս:

Վերջացնենք մեր „ախուր գեմքի հերոս-  
ների“ և նրանց զանազան տեսակի սրիկայու-  
թյունների ու խարեբայությունների ցանկը:  
Ապահովագրվածները շատ են շահագործում  
թերթիկները: Զիտայի թղթակիցը գրում ե, վոր  
յուրաքանչյուր 2000 թերթիկից 75 ապօրինի յեւ-

Քժեկական ոգնության թերթիկը վոչ-աշխատա-  
վոր տարրին տալլ

Վոչ-աշխատավորական տարրը միջացներ և  
գտնում ձեռք գցելու ապահովագրվածի բուժ-  
ունության տոմսը, վորով հնարավորություն և  
ձեռք թերում ոգտվելու ձրի բժշկությամբ ու  
դեղորայքով:

Ապահովագրական տոմսը ձեռքե-ձեռք տա-  
լու հետեանքով առաջ են գալիս կատարյալ ա-  
նեկդոտներ. — Բուժաբանում դեղատոմս ստա-  
նալիս բժշկի հարցին՝ «ի՞նչ ե ձեր ամուսնու»

անունը», բանվորուհին փնտրում ե գրպանում  
տոմսը, վոր կարդա և նոր տսե ամուսնու  
տնունը:

Հիվանդանոցային թերթիկի կեղծելը

Հիվանդանոցային թերթիկները յենթարկվում  
են բազմատեսակ խորամանկ կեղծումների: Միջին  
աշխատավարձի թվանշանին ավելացումներ են  
մնում. որինակ՝ 42 ո. ձախ կողմից ավելա-  
ցնում են մի հատ «1» և ստացվում ե 142 ո.:

Իայց կա ավելի բարդ կեղծիք. թերթիկը  
հիվանդության մասին նշանառումներով ներկա-  
յացնում են գանձարկղին ու դրամ ստանում:  
Ապա հայտնում, թե թերթիկը կորել ե և ստա-  
նում նորը, վորի վրա մի փոքրիկ ավելացու-  
մով փոփոխում են ազգանունը և յերկրորդ ան-  
դրամ նպաստ ստանում:

Թերթիկների վրա հիվանդության ժամա-  
նակամիջոցը յերկարացնելու համար թվանշան-  
ների կեղծումից զատ ավելի խոշոր զեղծումներ  
ել են լինում. աշխատավարձի մասին տեղեկու-  
թյուն գրելիս վարչությունը յերբեմն գիտակ-  
ցորեն գրում ե ավելի բարձր աշխատավարձ.  
որինակ՝ որական 1 ո. 87 կ. փոխարեն գրում ե  
4 ո. 87 կ., այսպիսով կեղծիքն ավելի բարդա-  
նում ե ու դժվարությամբ ե ստուգվում:

Հիվանդությունների անման պատճառները

Այժմ քննության առնենք, թե սիմուլիացիան ինչպես ե ազգում հիվանդությունների աճման և հատկապես գանձարկղի միջոցների վրա: «Ապահովագրական Հարցեր»-ում (№ 40-41 1924 թ.) լուսաբանված ե Լենինգրադի վեց գանձարկղների հիվանդության դեպքերի աճումը և այդ բացառությունը. նույնը կարելի յետ ասել և մյուս քաղաքների գանձարկղների մասին:

1924 թվի հունվարից մինչև հուլիս գանձարկղների ժամանակավոր անաշխատունակության ծախսն ավելանում ե շատ ուժեղ թափով և հետևապես ավելանում ե ապահովագրվածների գանձարկղին այդ առթիվ տված դիմումները:

Թվում ե, վոր դա հետևանք պիտի լիներ առանձին հանգամանքների. որինակ՝ համաձարակի, բայց այդ չի յեղել: Այդ հարցի քննությունը պարզեց հետեւյալը.

1. Շատ գործարաններ սանիտարական ու տեխնիքական անբավարար գրության մեջ են և աղջում են բանվորների որգանիզմի վրա, գարձնելով նրանց տրամադրի գանցղան տեսակի հիվանդությունների:

2. Բանվորների որգանիզմի քայլքայումը,

վորպես 1918—21 թ. տիտր տարիների ժառանգություն:

3. Հոգեբանական բնույթ կրող պատճառներ, վորոնք հրում են ապահովագրվածին, վորքան հնարավոր ե, լայն ոգտագործելու իր իրավունքները և ամեն մի հիվանդության դեպքում ավելի յերկարատև արձակուրդ ստանալ, չմտածելով այն մասին, վոր ապահովագրական միջոցների չափից գուրս ոգտագործումն ավելի յեքայքայում, քան կազդուրում:

4. Վերջապես, «սիմուլիացիա», յերբ ապահովագրական իրավունքներն ոգտագործվում են վոչ կարեփի դեպքում, այլ չարամտորեն: Այս վերջնն այնքան ել ճիշտ չել վորոշված, վորովհետեւ այս դեպքում հեշտությամբ կարելի յերշփոթել սիմուլիանտին և բարեխիղճ քաղաքացուն, վորն ամենայն իրավամբ կամեցել ե ավելի յերկարատև արձակուրդ ստանալ, վորովհետեւ բանվորի իսկապես թուլացած որգանիզմը պահանջում ե հանգիստ:

„Ամառային“ հիվանդություն

Բանվոր պատգամավորներն անխնայորեն քննադատում են ապահովանձարկղների թերությունները և միևնույն ժամանակ կտրականա-

պես գատավետում սիմուլիացիան, վօրակես բան-  
վորական շրջանում մի հիվանդագին յերեռյթ:

Նրանք նկատում են, վոր տմառ ժամանակ  
ավելանում ե հիվանդների թիվը, յերբ թվում ե,  
վոր ընդհակառակը, պիտի պահասի: Բանվորնե-  
րից վոմանք ունեն իրենց զյուղացիական տըն-  
տեսությունը և ահա ամառը, յերբ վրա յե  
համառում իրենց սեփական դաշտային աշխա-  
տանքի ժամը, ահա և ձեռնում են սուտ հի-  
վանդ «ամառային» հիվանդությամբ բռնված:  
(«Տրուդ» 27 նոյեմբերի 1924 թ. № 27). յեր-  
բեմն դատարկ բանի համար պահանջում են աշ-  
խատանքից ազտատել, իսկ ստանալով արձա-  
կուրդ, մեծ մասամբ կամ նստում ե տանը բարձ-  
րացնելու իրենց անտեսությունը, կամ զնում ե  
զյուղ՝ իր դաշտային աշխատանքը կատարելու:

Սիմուլիացիան մեզ մոտ հազվագյուտ յերեվույր չե

Հաստատված ե, վոր սիմուլիացիան մեզ  
մոտ հազվագյուտ յերեռյթ չե: Նիմոնի նովգո-  
րսում ամառային ամիսներում Սորմովսկայա  
գանձարկը կատարել ե աշխատանքից ազատ-  
վածների ստուգումն ու պարզել ե, վոր նրանց  
25 առկոսը սիմուլիանաներ են:

Լենինգրադում տանը բուժվողների վերա-

հսկողության առաջին փորձը տվել ե հետեւյալ  
հետեւանքները. անային հիվանդների 14—35%  
դուրս են յեկել առողջ: Մուկովանարկի  
շրջանում բժշկի այցելության ժամանակ հի-  
վանդների 63 առկոսը տանը չի յեղել, իսկ այդ  
այցելությունը յեղել ե ցերեկը:

Մուկովայի Բառեմանսկի № 12 գանձար-  
կը դում սեպտեմբեր ամսում հաշվի յեն առնվտծ  
յեղել 8705 հոգի ժամանակավոր անաշխատու-  
նակությամբ ազատվածներ: Նրանցից 4286 հոգի  
անցել են բժշկական վերահսկիչ հանձնաժողո-  
վով: ԲՎՀ ի վերահսկիչ բժիշկները միայն մի  
ամսում 135 այցելություն են կատարել տանը  
և ահա ինչ են նրանք գտել: Տանը յեղել ե 98  
մարդ, նրանցից մահճակալում 17 հոգի, աշխա-  
տելիս՝ 1 և զանազան՝ 80 հոգի:

Մատնանշված հասցեներով չեն դտել (իս-  
կական սիմուլիանաներ) 5 հոգու և տանը չեն  
յեղել 37 հոգի, վորից հետո բժիշկները վորոշել  
են թողնել արձակուրդում 43 հոգու, վերանա-  
յել 18-ի արձակուրդի հարցը, ուզարկել աշխա-  
տանքի 34 հոգու և մեկին համարել իսկական  
սիմուլիան («Տրուդ» 15 մարտի 1925 թ. № 67):

Մտալինոյից բանթղթակիցն առաջարկում է  
արհմիություններին լայն ազիտացիոն պրոպա-  
գանդա տանել նույն պայքարի նպատակով ցածը

վորակյալ աշխատավորության և նոր ընդունվողների մեջ, վորոնց մեծ մասը տառապում ենչ վոր փոքր տկարությամբ, վորոնք միաժամանակ կարող են աշխատել, բայց և այնպես աշխատում են ընկնել գանձարկղի վզին։ Առաջին իսկ բժշկական հաճնաժողովը նրանցից շատերին հետեւղարկում աշխատանքի։

Հոկտեմբեր ամսում բժշկական հաճնաժողով հաճախող 4144 հիվանդներից 1780 հոգի առողջ ելին ճանաչված և հետ ուղարկված աշխատանքի։

Միջին թվով այդպիսի հիվանդներ ամսական կլինին 20—25%, («Դիկտատուրա Տրուդա»—Ստալինո, 22 մարտի 1925 թ.) «Ճաշնորանվարական լրջանում աճում և սիմուլիացիան» (Ապահովագրական Հարցեր № 8, 1925 թ.) Բ. Վ. Հ. ի նիստում 180 հիվանդներից ուղարկված են աշխատանքի 110-ը։ 8 հոգի հիվանդներ պահանջում ելին հիվանդության թերթիկ, բայց յերբ նրանց առաջարկեցին պառկել հիվանդանոցում, վորպեսզի ստուգել նրանց հիվանդությունը, «հիվանդները» հրաժարվեցին բժշկությունից, վորովհետեւ հիվանդանոցում «տիսուր» ե։

Բոլոր չորս քաղաքները՝ Նիմնի-Նովգորոդ, Մոսկվա, Ստալինո և Լենինգրադը ինչպես

մերմում ե գտնվում են „թերթիկավոսների“ ազգեցության՝ մամուլի տակ։

Այդ քաղաքներից հետ չի մնում և հեռավոր իրկուտսկը։ Իրկուտսկի գանձարկղի վերատուգիչը հայտնաբերել ե հետևյալ դրությունը։ —յերբ ստուգողները այցելել են տանը 1123 հիվանդի, յերեացել ե, վոր նրանցից անաշխատունակ են յեղել միայն 594-ը, 97 հոգի ճանաչվել են աշխատունակ, աշխատանքի յեն գնացած յեղել 304 հոգի, տանը չեն յեղել 107 հոգի, իսկ 22 հոգի գանձարկղին տվել են վոչ ճիշտ հացե։ (Պենզայի «Տրուդովայա Պրավդա», 14 մարտի 25 թ. և Զերեմիովի «Կրասնի Ուգլեկոպ»)։

Մյուսները ուղարկվել են հիվանդանոց վերաքննության։ Գոյություն չունեցող հիվանդությունների սիմուլիացիա անողների այս յերկար ցուցակները բերում են այն տիսուր յեզրակացության, վոր մարդիկ թեթևամտություն են համարում ապահովագրական գանձարկղների ունեցած միջոցներից ըստ հնարավորության չոգտվելը։

Ճաշանների լրագրերը վայլում են նման հաղորդագրություններով։ Ո՞վ և այստեղ հանցավար։ Միթե մեր ապահովագրական որենսդրությունը, ըստ վորի հիվանդության գեպքում

տալիս ե փաստացի աշխատավարձը, վճարում ե  
ինչպես ասում են, „լրիվ”:

Յյո, կար ժամանակ յերբ բանվորների ու  
ծառայողների համար այդպիսի ապահովագրա-  
կան դրություն ստեղծելու հակառակ ցանկու-  
թյուններ յեղան:

Յերբ Գերմանիայում մտցրվեց առաջին  
անգամ պարտադիր ապահովագրություն, խիստ  
վտանգ եյին զգում, թե մի գուցե այդ բարեգոր-  
ծությունը փչացնի բանվոր դասակարգին ու  
տանի նրան գեպի բացարձակ ընդհանուր խա-  
բերայություն:

Վտանգավոր եյին համարում մեզ մոտ այդ  
„նորմուծությունը”, Յեվ խորհուրդ եյին տա-  
լիս մեզ խնայել ժողովրդի հոգին և նման բա-  
ներ չանել: Սակայն ապահովագրական որգան-  
ները մասսանիրի բացարձակ անկում և անուղ-  
ղելի վասնգ գերման ազգին մինչև այժմո չըե-  
րեցին և յերբեք սիմուլիացիան համաձարակի-  
չի վերածվել:

Իսկ մեզ մոտ, յեթե վորոշ տեղերում նկատ-  
վում ե սիմուլիացիա այդ պիտի վերտպքել վոչ  
այլ ինչի, յեթե վոչ մեր տղիտությանը, անզի-  
տակցությանը և անկազմակերպությանը:

Այժմ անցնենք սիմուլիացիայի, վորպես հա-  
սարակական չարիքի, դեմ կովելու միջոցներին:

### III. ՍԻՄՈՒԼԻԱՑԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սոցիալական ապահովագրությունը Հոկտեմ-  
բերյան նվաճումներից մեկն ե, ուստի և մենք  
պարտավոր ենք ամեն միջոց ձեռք առնել այդ  
պաշտպանելու և հասարակական դրամները պահ-  
պանելու: Վոչ մի գեպքում թույլատրելի չե-  
այդ դրամների անտեղի ծախսելը և անգիտակից  
ապահովագրվածների կողմից, խարդախ նպա-  
տակով նրանց վատնումը, քանի վոր մենք տե-  
սանք, վոր կան մարդիկ, վորոնք վոչ մի միջոցի  
առաջ չեն կանգնում թալանելու ապահու-  
ծարկը և թուլացնելու նրան, ուստի անհրա-  
ժեշտ ե գտնել դրա դեմ կովելու համար խոր-  
հրդատու ձեռնահաս ընկերներ:

### ԱԺԽԱՏԱՆՔ ԲԱՏ ԼԵՆԻԲԻ

Յեվ ահա պատկերանում ե մեր առջև իլի-  
չի անմոռանալի գեմքը: Բանվորական շարժման  
բոլոր ճյուղերին ընկեր Լենինի կողմից տրված  
են ցուցմունքներ: Նրանց մեջ կա և այսպիսին:  
Յուրաքանչուր, թեկուզ վոքը բանվորական  
գործ պիտի կատարել. վորքան հնարավոր ե  
ճշտությամբ, զրավելով զեպի այդ աշխատանքը  
քանի կարելի յե մեծ թվով հենց իրենց բանվոր-  
ներին:

ԷԵՆԻՆՅԱՆ այս գիծը կիռարվում եր առաջին բայլշեկի ապահովագրական գործիչների աշխատանքներում և դրա համար պատահականություն չե, վոր ապահովագրական գործը Ռուսաստանում ավելի լայն ծավալ ստացավ, քան մյուս յերկրներում:

Կուսակցական ու արհմիության կազմակերպությունների մասնակցությունը

ԷԵՆԻՆՅԱՆ այդ նույն գիծը պիտի անցկացնել և ներկա դեպքում, Յեկ իսկապես անցյալ տարի աշնանը ապգանձարկղների կոմիտեների վերընտրություններից առաջ Ռ. Բոլշ. կ. Մոսկայի կոմիտեն, Մոսկայի Խորհուրդը և Մոսկայի Նահանգ. Արհմիությունների Խորհուրդը գիտեցին Մոսկայի բոլոր բանվորներին, բանվորուհիներին և ծառայողներին մի կոչով, անհրաժեշտ գտնելով ամրապնդել ապահովագրածներին բաշխվելիք նպաստների տեսակներն ու նորմաները, իսկ այս խնդիրների լուծման համար պահանջվում եր ակտիվ մասնակցություն սիմուլացիայի բոլոր տեսակների գեմմղվաղ վճռողական կովում:

Մամուլը յեվ կոխվ սիմուլացիայի վեմ Քրողնի քաղաքից մի բանթղթակից սպառնում է բոլոր գանձարկղի թալանչիներին,

վոր նրանց գործին շուտով վերջ կը տրվի: Յեթե մենք ընդհանուր ուժերով կովենք դրա գեմ, հեշտությամբ արմատախիլ կանենք այդ ախտը: Յեվ այսպիսի ձայների թիվը մեծ է, նրանք առանձին կտրականությամբ հնչում են շրջանների բոլոր թերթերից: Մեկը գրում է, վոր նորմատիվ կոմիտեյին հարկավոր ե ամենակարուկ միջոցները ձեռք առնել սիմուլացիայի և կովել բժիշկների ու Բժ. Վեր. Հանձնաժողովների մխալ կարգադրությունների գեմ վորոնցով աշխատավորներին ազատելու արձակուրդներ են արվում:

Մի ուրիշը գրում է, վոր կոնֆերենցիան վորոշեց կատաղի կոխվ մղել սիմուլացիայի գեմ, միաժամանակ ապդանձարկղի լիազորների կողմից բանվորական շրջաններում զրույցների միջոցով ծանոթացնել աշխատավորությանը ապահովագրական գործին:

Վերջապես մի յերրորդը հայտարարում է, վոր վճռական պայքար ե պետք սիմուլացիայի գեմ: Միայն հարկավոր ե լսել թե ինչպիսի բառեր են ընտրում. «անինա», «կատաղի» ու «վճռական կոխվ»:

Յուրաքանչյուր գիտակից մարդ անհրաժեշտ պիտի համարի իրեն ուժերի կարողության չափով կովելու Ապահովագրական Գանձարկղի վը-

հասատուների դեմ, ինքը պիտի այդ զգա, և  
վոչ թե սպասի վորեն ցուցմունքի:

Բանվորը, վորպես բանձարկղի դիտակից  
անդամ պիտի կովի հասարակական այդ չա-  
ռեքի դեմ:

Բոլոր ապահովագրվածները պիտի կռվեն  
սիմուլիացիայի դեմ

Ապդանձարկղն իրեն ուժերով չի կարող  
հսկել յուրաքանչյուր արձակուրդ ստացող հի-  
վանդի: Ինչպես հետեւ, թե արդյոք նա ճշտու-  
թյամբ ե ոգտագործել իր արձակուրդը, հետեւ  
ե հիվանդության բուժման, թե ի չարն ե գործ  
դրել:

Յուրաքանչյուր մեկը, նախ և առաջ ինքը  
իրեն վրա յե հսկելու, իսկ արձակուրդը ի չարը  
գործ դնող ընկերոջը պիտի ասել, վոր դա թույ-  
լատրելի չե:

Դանձարկղի բոլոր միջոցները, դիմումներն  
ու ցուցմունքները իրենց նպատակին չեն հաս-  
նի, առանց բանվորի ակտիվ աջակցության, առ-  
անց բանվորական լայն մասսաների ուշադրու-  
թյան:

Մեր մեծ առաջնորդն ունի յերկու մեծ  
հոդված—մեկը կոչվում ե «Մեծ պատվիրան»:

մյուսը՝ «Խորհրդային իշխանության հաջողու-  
թյուններն ու դժվարությունները»—առաջնում  
նա ասում ե «Կոմունիստական կազմակերպու-  
թյունը հենվում ե աշխատավորության ազատ  
ու դիտակից կարգապահության վրա»:

Դա նշանակում ե՝ յեթե կամենում ենք  
լով գնել հասարակական գործը, աշխատանքի  
պիտի լծվեն բոլորը միահամուռ ուժերով,  
դիտակցորեն ու կազմակերպված ձևով:

Յերկրորդ հոդվածում ցույց ե տված հա-  
ջողությամբ տպված գործի մի նմուշ ու բացա-  
տրված ե այդ հաջողության պատճառը: Որինակը  
բերված ե 1917 թ. մեծ անցքերից: Ընկեր Լե-  
նինը գրում ե՝ «Հոկտեմբերին հեղափոխությունն  
ունեցավ հրաշալի հաջողություն, իսկ ինչու,  
վորովհետև մասսան կազմակերպված եր»: Գոր-  
ծի հաջողությունը պահանջում ե ընկերական-  
կարգապահություն և կազմակերպված աշխա-  
տանքը:

Վերջապես հենց այստեղ խորհուրդ ե տրը-  
վում, ինչպես մոտենալ հարցին,—պետք ե մո-  
տենալ մատադված, տակտով ու մարդավարի ձե-  
մով և վոչ իշխանական մոտեցումով, սա յե-  
նազթության գրավականը:

Վոչ մի կասկած չկա, վոր բանվոր դասա-  
կարգի առաջնորդ ընկ. Վ. Ի. Լենինի ցուցմունք-

ների մեջ, մենք կդառնենք մեր հարցի պատասխանը: Մեղ հարցնում են.—ինչպես պահպանել հասարակական դրամները վատնումներից, ովքիտի պահպանի, ովք պիտի կռվի սիմուլիացիայի դեմ:

«Բոլորը»—ստացվեց պատասխանը: Բոլոր ապահովագրվածները միահամուռ ընկերական կարգապահությամբ անմիջական ու գործնական մասնակցություն պիտի ունենան այդ չարեքի դեմ մղվող կռվում և կասկածից դուրս ե, վոր հաղթություն կտանեն:

Ինչո՞ւ սիմուլիացիայի դեմ կռիվն ապահովագրվածների իրենց պարտել ե

ինչո՞ւ հենց իրենք պիտի գործի անցնեն, գուցե մի ուրիշն ել կարող ե այդ անել: Ում գարդն ե կտրել, վոր զբաղվի իրեն չվերաբերող գործով: Ում համար ե ձեռք բերած յերկարաժե կռիվներից հետո սոցիալական ապահովագրությունը և ովք ե այդ ձեռք բերել—բանվորները, հոգուտ բոլոր ազնիվ աշխատանքով աղբողների համար:

Ապգանձարկդիմերի ֆոնդերն իրենց բանվորների ֆոնդերն են: Դա նրանց ամենամեծ գանձն ե: Բացի բանվորից ուրիշ վոչ վոք տըն-

տեսապես շահագրգոված չե այդ ֆոնդերի պահպանման ու բարգավաճման խնդրում:

Բանվորներն ավելի լավ են զգում, թե ինչ պիտի անել իրենց հիմնած վեհ գործի բարգավաճման համար, ինչպես ոգնել աշխատավորին, յերբ նա կորցնում է իր աշխատավարձը՝ կամ նեցուկից զրկված ընտանիքին, յերբ մեռնում է աշխատավորը:

Մեծ ջանք ե հարկավոր այդ բարդ գործն իրագործելու համար: Առանձին անհատի և առանձին խմբերի ուժերից վեր ե այդ—այստեղ հարկավոր ե աշխատողների կուռ կոլեկտիվ, այն ե՝ հարկավոր են իրենք ապահովագրվածները, իրենց ընկերներին ավելի մոտ կանգնածները:

Ապահովագրվածների մասնակցության չափեցն ե կախված կռվի հաջողությունը և սիմուլիացիայի դեմ, և բանվորների վրա վասրագող յերեսութների դեմ:

Բանվոր դասակարգի վաղեմի ցանկություններ մեծ ազդեցություն ունենալ գոյություն ունեցող «Հիվանդանոցային գանձարկդիմ» վրա: Այժմ հասել են գրան:

Յերբեմն հարց ե ծագում, թե ինչումն ե կայանալու մասսաների տմենորյա մասնակցու-

թունը սոցիալական ապահովագրության գործում:

Այդ հարցի լուծումն այնքան ել դժվար չէ. հարկավոր ե միայն, վոր յուրաքանչյուր ապահովագրված մասնակցի ընդհանուր գործին, ինչպես այդ անում ե մեղուն իր հազարավոր ընկերների հետ մեղք պատրաստելիս:

Նրան չի հետաքրքրում այս, թե ով ե ոգաղքելու այդ աշխատանքից՝ մեղքից. նա մթիժարկում ե գիտակցությամբ, վոր այդ ընդհանուր աշխատանքի մեջ կա և իր աշխատանքը՝ մի կաթիլ մեղքը։ Նույն զգացմունքն ե ունենալու և հանրոգուտ գործի համար աշխատակուրաքանչյուր մի աշխատավոր։

Սիմուլիացիայի դեմ կռվելու ձեվերը

Այս բոլորից յերկում ե, վոր ապահովագրվածները իրենք պիտի կռվեն սիմուլիացիայի դեմ և իրենց սուտ հիվանդ ընկերներին ուղիղ ճանապարհի վրա կանգնեցնեն։

Յեթե մեզնից վորեն մեկը նկատում ե, վոր առողջ առահօվագրվածը արձակուրդ և ըստացել և մանավանդ այդ արձակուրդի միջոցին պարագում ե կողմանակի աշխատանքով — առետընով և այլն, մենք պարտավոր ենք այդ մա-

սին հայտնել Ապահովագրական Գանձարկղին կամ տեղկոմին, այդ չաբագործությունը կասեցնելու համար։

Ապահովագրական Գանձարկղների գործը ընդհանուր գործ ե, ուստի բնական ե, վոր բոլորը միահամուռ ուժեքով պիտի լծվեն այդ գործին։

Վնասակար ու անցանկալի յերկույթների դեմ կոփվու պիտի բազմակողմանի լինի։ Կը պատահի հիվանդ, անոտարել վերաբերվող գեղի հիվանդության բուժումը, նրան խորհուրդ տուր չխուսափել բժշկի պատվերներից։ Կը պատահի մի ուրիշ հիվանդ, զիտավորյալ կերպով իրեն հիվանդությունը յերկարացնող, տուա, վոր դամոթ ե։

Խաղաղ ճանապարհով համոզելը մեծ բան կարող ե անել։ Գանձարկղի գիտակից անդամները չպիտի թույլատրեն վորեն մեկին անաշխատունակության սիմուլիացիա անելու։

Սիմուլիացիայի հայտնաբերելը և այդ մասին հայտնելը մասնություն չե, այլ սեպուհ պարտականություն։

Սիմուլիանուին պատահողն սկզբից պիտի համոզի յետ կանգնել այդ վայրից, կարիքի գեպքում պիտի զիմի ընկերների ոգնությանը և հետո միայն պիտի զգուշացնի բժշկին

կամ ապգանձարկղին, դրամ չվճարելու մասին:

Վորքան քիչ լինեն ապգանձարկղի նման վճարումները, այնքան տնտեսած կլինի նա իր միջոցները և այնքան լայն կտարածի իր գործունելությունը:

Ավելի մոտ են կանգնած մասսային և ավելի լավ են ճանաչում բանվորներին միութենական ցածր կազմակերպությունները և աշխատավորական ակտիվը—տեղկոմիները, կուսրջիջները, աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները, բանթղթակիցները:

Այս բոլոր խմբակները պիտի միմյանց աշխատեն դրված նպատակին հասնելու համար:

Բժիշկը յեվ սիմուլիացիայի դեմ կովելլ

Ում են դիմում հիվանդներն առաջին անգամ: Ի հարկե բժշկին. նրա մոտ են գնում թե իսկական հիվանդները և թե հիվանդ ձևացողները:

Այդ դեպքում բժշկի վրա պարտականություն ե ընկնում վորոշել վորտեղ և ճիշտը և վորտեղ սուտը, և ահա բժշկշկը—ինչպես ասում են—մնում ե յերկու կրակի մեջ՝ մի կողմից պահպանել հիվանդի շահերը, իսկ մյուս կողմից հավատարիմ լինել դեպի այն գանձարկղը, վորը նրան և հավատացել այդ գործը:

Ուստի բժշկշկը պարզ կերպով պիտի իրեն պատկերացնի, թե ինչ ե սիմուլիացիան և ինչպիսի միջոցներով կարելի յե այդ հայտնաբերել: Յեվ այսպես, քանի վոր թե իսկական հիվանդները և թե հիվանդ ձևացողները ամենից առաջ բժշկի մոտ են գնում, նրան ե ընկնում սիմուլիացիայի, վորպես հասարակական չարիքի դեմ մղվող կովում ամենամեծ դերը:

Սիմուլիացիան հայտնաբերելու կարգը

Թե ինչով պիտի առաջնորդվի բժշկշկը սիմուլիացիան հայտնաբերելու համար, բոլորը թվել հասարավոր չեւ:

Միանգամայն անաշառ, հիմնական զիտությունները յուրացըրած և յերկար տարիների փորձառություն ունեցող բժշկշկը իհարկե կարող ե բացել ճշմարտությունը:

Ի միջի այլոց այդ մասին ցուցմունքներ տրված ե բժշկշկ Բեկկերի գրքի ոռուսերեն հրատարակության մեջ (Պրակտիկա Մեղիցինի հրատարակություն 1910 թ., Հիվանդության սիմուլիացիա և նրա հայտնաբերելը):

Նրանցից վոմանք այնքան հետաքրքիր են, վոր անկարելի ե չհիշել: Սիմուլիանտները ամեն կերպ աշխատում են խուսափել վերաքննությունից:

Ինչպես բժիշկն ե ասում, նրանք քննության են գալիս կանանց ուղեկցությամբ, վորովհետեւ, իբր թե գլուխը պառւյտ ե գալիս և չի կտրող մենակ, առանց ուրիշի ոգնության ման գալ, իսկ քիչ հետո տեսնում են նրան կառք քշելիս և կամ առանց ուղեկցի զբոսնելիս: Սիմուլիանտները իրենց շատ ազնիվ են համարում և ասում են, վոր իրենք սիմուլիանտներ չեն, այլ կարիքն ե ստիպում ծանրաբեռնել գանձարկը:

Ուրիշները «ոսւս ու փուս» են լինում, խորամանկ նայում են, միշտ լուս են և հարցերին պատասխանում են շատ դանդաղ:

Պիտի հետեւել նրանց շարժումներին: Սիմուլիանտը միշտ իրեն հիվանդությունը սովորականից ավելի յե ձեացնում, անա կույրից վատ ե տեսնում, խուլից վատ ե լուս, կաղից ավելի յե կուռում և այլն»:

Նրանք վանդությունը որգանիզմի ընդհանուր դ ի մանը չի համապատասխանում, որինակ՝ ոտքում են ձեռքերի անաշխատունակութից, մինչդեռ շատ աշխատելուց ձեռները ներով են ծածկված:

Ճշմար յունը փնտռելու համար, բժիշկները իրեն առքի տակ ունեն յերկու տեսակ միջոց—դ ոժիական տեխնիքական և ընդհանուր բող միջոցներ:

Բժշկի համար ոգտավետ ե տեղն ու տեղը հիվանդի բոլոր հայտարարությունները մանքամասն գրի առնելը, վորպեսզի հետո քննության ժամանակ արած հայտարարությունների հետ համեմատել:

Սովորաբար այստեղ, ասում ե բժիշկ Բեկկերը, սիմուլիանտները ընկնում են թակարդի (թալագի) մեջ:

Հին ժամանակ սիմուլիացիա հայտնաբերեցու համար զանազան միջոցների եյին դիմում—մի շարք այդպիսի միջոցներով յերբեմն հաջողվում եր ի հայտ բերել սուտը: Նկարազրկում ե այսպիսի դեպք:

Դասարանում բժիշկը մոտենում ե հետեւից ֆրեն խուլ ձեացնող մի սիմուլիանտի և կամաց ասում ե ականջին, վոր վարտիկը կոճկիւա անմիջապես սկսում ե կոճկել և այդպիսով մատնում ե իրեն,

Շարունակելով թվել բժշկի ձեռքի տակ յեղած միջոցները, Բեկկերը վորոշակի կերպով առաջարկում ե սիրալիր զրույցի և զգուշորեն համոզմունքի ճանապարհը: Սիմուլիացիայի զեմկովելու ամենահիմնական միջոցը նա համարում ե տուժողին մանրակրկիտ ուսումնասիրելու գործը, նրա զանգատների ճիշտ գնահատումը և չափազանցրած պահանջների ճիշտ սահմանի պորոշումը:

Հետագայում առաջարկվում ե, վորպետ  
ոգտակար միջոց, կիրառել անսպասելի այցե-  
լությունները հիվանդի տունը և հիվանդին  
փորձի համար հիվանդանոցում տեղավորելը՝  
կասկածելի դեպքում, խորհուրդ ե տալիս ու-  
սումնասիրել հիվանդի անցյալը, պարզել նրա  
ժառանգականությունը, առողջության դրու-  
թյունը մանկական և պատանեկական հասա-  
կում:

Այս բոլորը պիտի կիրառել ապահովագրու-  
թյան բնագավառում գործնականապես, ավե-  
լացնում ե բժիշկը, և այն ժամանակ, ոյուրին  
ե հիվանդության և զժբախտ դեպքի միջև յե-  
ղած կապը պարզել, թե արդյոք իսկապես կապ  
կա, թե դա սիմուլիացիա յե:

Անհրաժեշտ ե զժբախտ դեպքից հետո ան-  
միջապես տեղեկություն ունենալ տուժածի ա-  
ռողջության մասին: Ոգտակար ու հիմնավոր  
տեղեկություն այդ դեպքում կարելի յե ստա-  
նալ առաջին բժշկական ոգնություն ցույց տվող  
բժշկից:

Այն հիվանդանոցից, վորտեղ առաջ բուժ-  
վել և տուժողը նույնպես կարելի յե տվյալներ  
հավաքել նրա ունեցած հիվանդությունների  
մասին:

Մի քանի հիմնարկությունների սերտ աշ-  
խատանք ե անհրաժեշտ—յեզրակացնում ե բժ-  
ժեկերը, այն ժամանակ հարցը կըստանա բազ-  
մակողմանի լուսաբանություն:

Բժիշկ Նազեժդինը տալիս ե հիվանդու-  
թյունների ցանկը, նրանց սիմուլիացիան և  
նրանց հայտնաբերելու միջոցները: Այդ ցանկը  
ընդունվում ե շատ հիվանդություններ, վորոնց  
կարելի յե սիմուլիացիա անել:

Անհրաժետ ե բժշկին ծանրությունը  
արտադրության աշխատանքի նետ

Բժշկող բժշկին, սիմուլիացիայի դեմ կովե-  
լու համար, անհրաժեշտ ե հանգամանորեն ծա-  
նոթանալ հիվանդի տարած աշխատանքների հետ  
արտադրության մեջ:

«Կաչեղարկա» թերթը գրում ե, վոր Կրա-  
մատորսկի ապդանձարկում սիմուլիացիայի  
դեմ կոփվը թույլ ե տարգում: Պատճառը այն ե,  
վոր չկա ուժեղ հսկիչ և վոր գլխավորն ե, շատ  
գեղըերում բժիշկները ծանոթ չեն արտադրու-  
թյան պրոցեսսին ու ազատում են աշխատան-  
քից բանվորներին այն ժամանակ, յերբ աշխա-  
տանքը նրանց համար ամենեին վնասակար չե:

Գործին ոգնելու համար, թերթը խորհուրդը ետալիս բժշկի ընդունելությունների ժամանակ արտադրությունից յերկու ընկերներ նշանակել բժշկին ոգնելու և այդ միջոցով հույտունի սիմուլիանտներին բռնելու.

Իրեն առանձնասենյակում առանձնացած աշխատանք տանող բժիշկը, բանվորի համար ավելի քիչ եռոգտակար, քան նա, ով հաճախ այցելում երգործարան, տեսնում եթե ինչպես եղում գործը արտադրության մեջ, ուսումնասիրում եաշխատանքի բնույթը, դեմքերից ճանաչում երոլոր բանվորներին և մինչև անգամ զիտենրանց ընտանեկան նիստ ու կացը:

Տեսնելով բժշկին իրեն միջավայրում դյազգահի առաջ, բանվորը մոտ եղում նրանց դրա հետ միասին արդ հաճախակի շփումը կողմի բժշկին վորոշել ու հայտնաբերել բանվորի հիվանդությունը:

Այսաեղ բանվորները հաճույքով կըսկսեն պատմել իրենց մեջ յեղած հիվանդություններին գեղքերի մասին, կարտահայտվեն ուրիշ բժշկների մասին, հենց այսաեղ բժիշկը կարող ետալ բարի խորհուրդ, կարող եաշխակ անել և զիճել:

Յենթաղրենք, այսոր բժշկի առանձնասենյակն յեղել թթված դեմքով սիմուլիանտը և

գանգատվում ենչ վոր մշտական ցավի մասին:

Այդ նույն որը ճաշելու ընդմիջումի ժամանակ, գործարան հաճախող բժիշկը, կտեսներ, ինչպես այդ մոայլ հիվանդը կատակներ եր անում ընկերների հետ, ինչպես ծանր իր եր բարձրացնում և կլսեր, թե ինչպես ընկերները ծաղրում եյին անհաջող սիմուլիանտին:

Բերենք մի ուրիշ որինակ, թե ինչու հիվանդին ձիշտ բժշկելու համար, բժշկին հարկավոր եածանոթ լինել արտադրությանը:

Բանվորը ցավեցրել եաշխատել, նա հիվանդանում եմեկ-յերկու շաբաթ, բայց համենայն դեպս փոքր ցավ եղում, յեթե նա տոկար եիհարկե կարող եաշխատել, իսկ յեթե նրան անհրաժեշտ եմեքենայի վրա բարձրանալ և կաթսայի վառարանը մաքրել, պետք ենրան ազատել աշխատանքից:

Բժ. վեր. հանձնաժողովների համար ել նույնպես, ինչպես բժշկող բժշկի համար, անհրաժեշտ ե-կարողանալ հաշվի առնել հիվանդի արհեստը:

Հանձնաժողովի առաջ կա յերկու հիվանդ յերկարատեարակությունը: Յերկուսն ել տիֆ են ունեցել, յերկուսի ել սիրտը թույլ ե, նրանցից մեկը ծանր աշխատանքի բանվոր ե, իսկ մյուսը զբասենյակային ծառայող ե:

Նրանցից ով ավելի յերկարատև արձակուրդիքի կարիք ե զգում. իհարկե բանվորը, քանի վոր նրա աշխատանքի պայմաններն ավելի ծանր են:

Յեթե միայն դեկավարվել հիվանդությունների ցուցակով յերկու հիվանդին ել պետք եր տալ միենույն տևողությամբ արձակուրդ: Բանավորի համար այդ ժամանակը քիչ կլինի, իսկ ծառայողի համար շատ: Ահա թե ինչու կարեվոր ե փոր բժ. վեր. հանձնաժողովում լինեն ապահովագրական լավ գործիչներ. «ծանոթ արհեստակցական, առողջապահության, աշխատանքի պաշտպանության հարցերի հետ և սերտ կապված գանձարկղի հետ»:

Բժիշկներին անհրաժեշտ է ծանոթ լինել ապահովագրությանը, տեսականորեն յեվ գործնականութեն

Բացի արտադրության հետ ծանոթ լինելոց, բժիշկներին անհրաժեշտ ե և սոցիալական ապահովագրության թեորիայի և պրակտիկայի հետ ծանոթություն ունենալ:

Անհրաժեշտ ե բժիշկների մեջ ուժեղացնել ապահովագրության լուսավորությունը, նրանց քաշել դեպի ապահանձարկուների շահերը, նրան-

ցից վոմանց ոտար չե այդ, իսկ բժիշկներից շատերը խուսափում յեն սոցիալական ապահովագրությունը ուսումնասիրելուց:

Յեվ յեթե բժշկով բժիշկներն ասում են. «Մեր գործն ե բժշկել, իսկ ձերը սոցապահովագրությամբ զբաղվել», իհարկե նրանք արդարացի չեն:

Թեկուզ հենց վերցնենք ապահովագրական ժարմինների ֆինանսական դրությունը: Անպայման ի նկատի պիտի ունենան այդ արձակուրդ տալու իրավունքը ունեցող բժիշկները, մանավանդ նրանք, վորոնք առատ կերպով հիվանդության թերթիկներ են տալիս «լավ բժիշկ» անուն վաստակելու համար:

Նրանք արձակուրդի անհրաժեշտությունը արդարացնում են ասելով. «Որգանիզմը մաշված ե և հիվանդությունը ակնհայտ»:

Գործնական միջոցներ սիմուլացիայի դեմ կովելու

Շատ վեճեր են ծագում հիվանդության պատճառով արվող արձակուրդի տևողության առթիվ՝ թե բժիշկը քանի որով կարող ե աշխատանքից ազատել:

Այդ հարցը լուծում են մի քանի տեսակ— և ենինքաղի նահանդական սոցապահովագրու-

Թյունը բեռնակիլմների մեջ սիմուլիացիայի դեմ կոփը ուժեղացնելու համար, վորոշել ե բժշկով բժիշկների կողմից արված հիվանդության թերթիկների ժամանակամիջոցը սահմանափակել 7 որով:

Թիբինսկի գավ. քաղ. ապահովագրական գանձարկղը սիմուլիանտների վրա հսկողությունն ուժեղացնելու համար, վորոշել ե, վոր բժիշկը հիվանդին արձակուրդ տա ամենաշատը 4 որ, իսկ հինգերորդ որը հիվանդը ներկայանա բժ. վեր. հանձնաժողովին:

Ուղանովսկուց գրում են, վոր ապահովագրական գանձարկղները ծանրաբեռված են ժամ. անաշխատունակության նպաստի բաշխումով Միենույն բանվորը մի ամսում մի քանի անգամ ոգտվում ե յերկու.յերեք որվա արձակուրդով:

Դրա դեմ առաջարկում են հետեյալ միջոցները.—

1) Վոտքի վրա և տանը գտնվող հիվանդներից, վոչ ավելի քան յերկու որով արձակուրդ ունեցողներին նպաստով չբավարարել.

2) Բժշկությունը կատարել հիվանդանոցում.

3) Հիվանդներին անցկացնել բժ. վերհանձնաժողովով, վորը հաճախ գումարել և

4) Խիստ հսկողություն սահմանել տանը բուժվողների վրա:

Յեկատերինասլավի բուժարանների, հիվանձանցների, բժ. վեր. հանձնաժողովների և ապգանձարկղների աշխատակիցների խորհրդակցությունը, սիմուլիացիայի դեմ կովելու հարցիր վերաբերյալ, արտահայտվեց հոգուտ հետեյալ ձևերի ընդունման՝ ունենալ ընտանեկան քարտեր, ուժեղացնել կապը գործարկումների և արհմիությունների հետ, յուրաքանչյուր յերկու ամիսը մեկ անգամ գումարել արտադրողական խորհրդակցություն, վորտեղ բան. բուժ. բաժինը և ապգանձարկղը հաշիվ տան բանվորներին:

Աշխատանքի ընդունելիս ծառայողներին և բանվորներին յենթարկել բժշկական քննության, վերանայել բժիշկների ծանրաբեռվածության աստիճանը, քանի վոր այդ հիման վրա, հոգնածության ու անուշադրության հետեւանքով, բժիշկների աշխատանքի վորակը իշնում եւ քով, բժիշկների աշխատանքի վորակը իշնում եւ

Հիվանդի ուսումնասիրությունը  
հիվանդանոցում

Պրոֆեսոր Ա. Ա. Սուխովը նկատում եւ վոր սիմուլիացիայի մասին յեզրակացությունը

հանելու համար «միմիայն հիվանդի վրա հըս-  
կողություն ունենալը քիչ է. այլև անհրաժեշտ  
եւ ուսումնասիրել հիվանդին։ Կան շատ ջղային  
հիվանդներ, վորոնց հիվանդությունը այնքան  
մութն եւ բարդ, վոր մինչև հաշվի առնելու  
ժամանակը չի հաջողվում նրան նույնիսկ փորձ-  
ված և հմուտ բժիշկներին անգամ այդպիսինե-  
րին ուսումնասիրել։

Մյուս կողմից քիչ փորձառություն ունե-  
ցող բժիշկները կարող են գերազնահատել, չա-  
փազանցնել կամ թերազնահատել հիվանդու-  
թյան ներկա դրությունը։

Թե այս և թե մյուս դեպքում սիմուլիանտ-  
ների տոկոսը աճում է։ Այդ տոկոսի իջեցմա-  
նը կարող են պաստել միայն նրանց հայտնաբե-  
րումը, ստուգումը բարձր բուժ։ հիմնարկնե-  
րում, փորտեղ համապատասխան փորձը կը կա-  
տարվի և կպարզվի թե հիվանդի անաշխատու-  
նակությունը սուտ ե թե ճիշտ։

Այս միջոցը ավելի արդյունք և խնայողու-  
թյուն կը տա ապգանձարկղին, քան պայքարելու  
այլ միջոցները։

Սիմուլիացիայի դեմ կովի հաջողության  
համար ցանկալի յեւ, վոր մասնագետ բժիշկնե-  
րը հետևեն քննվողին վոչ միայն եքսպերտ  
հանձնաժողովներում քննելու ժամանակ, այլև

հիվանդանոցում, վորտեղ կարելի յեւ բազմա-  
կողմանի և լրիվ ուսումնասիրել հիվանդության-  
ընթացքը և ուղիղ վորոշել թե աշխատունա-  
կությունը արդեն կորած ե, թե նա դեռ կա։

Ապահովագրական գրքույի մտցնելը

Նպաստ ստանալու փաստաթղթերը տալիս  
իրենք ապգանձարկղները պիտի լավ հսկեն-  
սուտ հիվանդներին։ Ներկայացրած փաստա-  
թղթերը քննելիս պահանջում ե մեծ ուշադրու-  
թյուն և զգուշություն։

Հաճախ են պատահում բուժքարտերի և  
հիվանդության թերթիկների զեղծումներ։ Վոր-  
պեսզի արդիլել ուրիշի փաստաթղթերսվ ոգ-  
տվելը, հարկավոր ե ապգրքույկների վրա փակ-  
ցնել ապահովագրվածների լուսանկարը։

Բժիշկները հիվանդության թերթիկի տեղը  
այդ գրքի մեջ կարող են մտցնել իրենց նշանա-  
ռումները և հենց այստեղ կարող են զբել ամեն-  
տեսակ բաշխումներ։

Վնաս չեր գրքույկներին կցել ապորինի  
կերպով ապահովագրական միջոցներից ոգտվող-  
ների դեմ քրեյական հողվածների քաղվածք-  
ներ։

Ապահովագրական գանձարկղում քիչ չեն-

գեպքեր, յերբ միենույն անհատը ստանում է  
նպաստ թե գործազրկության և թե հաշմանդա-  
մության:

Զամոսկովբեցկայա գանձարկղում այդ բա-  
նի գեմ ընդունված եր այս ձեր, ամիսը մեկ  
անգամ այբուբենական կարգով գործազուրկ-  
ների ու թոշակառուների ստուգում եր կատար-  
վում. այսպիսով պարզվեց, վոր 22 հոգի թե  
գործազրկության նպաստ եյին ստանում և թե  
թոշակ եյին ստանում, իբրև աշխատանքի ան-  
կարներ:

Նման կրկնակի հաշվապահության ստու-  
գումը շատ դժվար է, քանի վոր աշխատողները  
նպաստ ստանում են աշխատանքի վայրում, իսկ  
գործազուրկներն ու հաշմանդամները ըստ բնա-  
կության տեղի:

Բոլոր տեսակի նպաստների և թոշակ-  
ների համար ապահովագրական մի դրբույկը  
սահմանելը վերջ կրկներ թե միաժամանակ մի  
գանձարկից յերկու տեսակի ապահովագրական  
նպաստ ստանալուն և թե ժամանակավորանաշ-  
խատունակության նպաստը յերկու և ավելի  
գանձարկներից ստանալուն: Անա թե ինչպիսի  
միջոցների են դիմում մարդիկ, առանց մտա-  
ծելու և հաշիվ տալու իրենց թե դրանով վոր-  
քան չարիք են բերում իսկական կարիք ունե-  
ցողներին ողնելու ընդհանուր գործին:

Մոսկվայում հաշվում են մինչև 27.000  
ապահովագրիներ: Յուրաքանչյուր հիմարկու-  
թյուն կամ ձեռնարկություն ունի բազմաթիվ  
բաժիններ, յենթաբաժիններ, ճաշարաններ,  
խանութներ, վորոնք ցրված են ամբողջ քաղա-  
քի մեջ:

Վորքան ել ամրացրած չլինեն ապահովա-  
գրվածները կենտրոնական հիմարկությանը  
կամ տեղկոմին, նրանց այս շրջանից այն շը-  
ջանը փոփոխմանը հետեւլը անհնար ե:

Միասնական ապահովագրական գրքույկ  
մատցնելը մեծ ոգուտ կրբերեր և բացի գրանից  
տեղի չեյին ունենա այսպիսի ծիծաղելի դեպ-  
քեր, վորպիսիներից մեկը հայտնաբերվել ե  
Նեմ-հանրատպետությունում:

Մի ապահովագրված կին, հղիության 2-րդ  
ամսում իր փոխարեն ուղարկել ե բժշկական  
քննության մեկ ուրիշ հղիության 8-րդ ամսում  
գտնվող կնոջ: Բժիշկը քննելով վերջինիս տալիս  
ե անհրաժեշտ արձակուրդը, սակայն արձա-  
կուրդը յերկարում ե, ծնունդը ուշացավ վեց  
ամսով:

Բժշկական գրքույկի վրա լուսանկար փակ-  
ցնելը անհնար ե դարձնում ձրի բժշկություն  
կամ դեղորայք ստանալու համար գրքույկը ու-  
ժիշներին տալը:

Հիվանդության թերթիկը դրամական  
փաստաթուղթ

Այժմ անցնենք հիվանդության թերթիկներին։ Այս գրամական փաստաթղթերը հաճախ են կեղծվում։

Նրանք ի չարն են գործադրվում յերեք տեսակ։

1) Զեղծվում ե աշխատանքից ազատվելու որերի թիվը։

2) Զեղծվում են հիմնարկի նշանառումները աշխատավարձի չափի մասին։

3) Գողացվում են հիվանդության թերթիկների մաքուր բլանկներ, սուտ տեղեկություններով լցնելու նպատակով։ Թվերը զեղծելուց խուսափելու համար, որինակը յերբ 1-ը դարձնում են 4 կամ յերե ավելացնում են 1, պետք ե աշխատավարձի գումարը գրել բառերով և վոչ թե թվանշաններով և վերջինս հաստատել պատասխանատու անձնավորության ստորագրությամբ։

Բժշկող բժշկի կողմից ազատելու ժամանակամիջոցը կեղծում են, արձակուրդն ավելացնելու նպատակով, որինակ՝ բժիշկը գրում ե «Աշխատունակ ե ճանաչված նոյեմբերի 3.ից» իսկ չարագործը 3.ի առաջ 1 ե ավելացնում ե

ստացվում ե աշխատունակ ե ճանաչված 13.ից նոյեմբերի»։

Նման կեղծիքից խուսափելու համար աշխատանքից ազատելու և առողջանալու ժամանակամիջոցը պիտի գրել բառերով և առաջարկել ե ըուժ։ հիմնարկներին հիվանդության թերթիկների կտրոններն անհապաղ ուղարկել գանձարկող, վոր գանձարկում հիվանդարկողի այն հաշվով, վոր գանձարկում հիվանդարկութիւնի ներկայացվելուց կտրոնները ստացված լինեն և հնարավոր լինի ստուգումն կատարելու սիմուլիացիայի դեմ կովելու միջոցների մասին։ հաճախ ելին գրում լրագիրներում, իսկ 1925 թ. 26.ին փետրվարի հրատարակվեց ՍԽՀ Միութ. Աշխատողկոմատին առընթեր սոցիալական ապահովագրության Միութենական Խորհրդի № 75/902 վորոշումը. «Ժամանաշխատը ստանալու չարաշահումները կանխող միջոցների մասին»։

Միության Խորհուրդն անհրաժեշտ գտավ հիվանդության թերթիկները լրացնելու, ստորագրելու և ըուժ։ հիմնարկների կողմից թերթիկի կտրոնը գանձարկութիւն ուղարկելու մասին վորոշ կանոններ սահմանել։

Մինույն ժամանակ, ապօրինի կերպով լրացնող ու թերթիկ տվող թե բժիշկները և թե սուտ ու սխալ տեղեկություններ տվող հիմ-

նաբկությունների վարչական սարմինները պիտի քրեյական պատասխանատվության կանչվեն:

Խորհրդային իշխանությունն աշալուրջ եղեցի այն հարցերը, վորոնք ծեծվում են մասու խելացի միջոց հառարակական առաջարկ թյունները վերացնելու մասին՝ շուտով դառնում են վորոշումներ ու որենքներ:

Հիփանդանոցային թերթիկները պիտի տպագրել գրքույկի ձևով. և ժապավինելուց, համարակալելուց կնքելուց հետո միայն հանձնել բուժ. հիմնարկներին:

Առբաժինները պիտի այդ թերթիկների հաշվը պահեն ինչպես դրամական փաստաթղթերի հաշիվ:

Նպաստ կամ կենսաթոշակ տալիս ևս պիտի հետեւ, վոր զբաները իսկական ապահովագրվածի ձեռքը ընկնեն—դրա համար ստացողը պիտի ներկայացնի անձնական վկայական կամ վկայական հիմնարկությունից:

Յեթե բաշխումը կատարվում է փաստաթղթերի յերկրորդ որինակներով տվյալները պետք են նրանց տվյալները համեմատել աշխատավայրի ու բուժ. հիմնարկի տվյալների հետ:

Գանձարկում ստացվող թերթիկները ստուգելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունե-

նալ, թերթիկներ տվող բժիշկների ու բուժ. հիմնարկների կնիքների ու ստորագրությունների որինակները:

Համեմատելով թերթիկների վրայի կնիքը և ստորագրությունն այդ որինակների հետ, հեշտ ե գտնել կեղծիքը:

Բժշկական հսկողություն

Հին ժամանակ ցարական կառավարությունը չեր պարապում իրեն համար այնպիսի գործով, ինչպիսին ե բանվորների առողջության ու աշխատունակության պահպանաման գործը:

Հիփանդանում եր բանվորը—նրան ի՞նչ, չեզոք ինքը բանվորի հիփանդության ամբողջ ժամանակում վոչինչ չեր վճարում։ Հարմագույն կամ հիփանդության ունեկավոր չեր և բժշկական հսկողություն ունենալ:

Ժամանակավոր անաշխատունակության մասին սոցիալական ապահովագրության որենքը պետք է գալուց հետո, յերբ հիփանդության ժամանակամիջոցի համար, աշխատավորն սկսեց գանձարկողից ստանալ իր աշխատավարձը, կարիք դգացվեց և բժշկական հսկողության:

Բժշկական վերահսկողության գլխավոր

նպատակն եւ աշխատավորի աշխատանքի ու առողջության պահպանությունը, հիվանդության սիմուլիացիայի դեմ կովելը և ազահովագրական միջոցների պահպանումը:

Բժ. վերահսկիչ հանձնաժողովը (Բ. Վ. Հ.) հաստատում եւ ժամ. անշխատունակությունը և համապատասխան արձակուրդն եւ տալիս, պարզում եւ թե հիվանդը մասնագիտական բժշկության (որինակ՝ սանատորիայում հիվանդանոցում) կարիք զգում եւ թե վոչ և ինչ չափով վորոշում եւ նրա աշխատունակության վերականգնումը և գործի անցնելու ժամանակը:

Ակնհայտ հաշմանդամության դեպքում, ուղարկում եւ բժշկական եքսպերտիզայի բյուրոյին, վորոշում եւ ավելի թեթև աշխատանք տալու և արհեստի փոփոխման անհրաժեշտությունը:

Ստուգում եւ բժշկող բժշկի կողմից աշխատանքից ազատելու ճշտությունը (վորպիսին ստուգման ժամանակ հայտնաբերվում են աշխատանքից փախուստ տվածները և «թերթիկավորներ»): Բնակության համար լրացուցիչ տեղ ստանալը և բուժման համար արտասահման գնալը, նույնպես մտնում եւ բժշկական հանձնաժողովի գործունեյության մեջ:

Պետական հիմնարկություններին ու ձեռ-

նարկություններին կից բուժարաններին, հիվանդանոցներին և տանը բժշկական ոզնություն ցույց տվող բժիշկներին իրավունք եւ տրվում բժշկվելու համար աշխատանքից ազատել այն բժշկվելու համար աշխատանքից ազատել այն բժշկվելու համար աշխատանքից ազատել այն բժշկվելու համար աշխատավայրի շրջանային բժբշտական հանձնաժողովները:

Բանվոր-ծառայողներին արձակուրդ տալու վրա սահմանած հսկողությունը դեռ բավական չե, հարկավոր եւ ապահնաբրկուներին կից հիմնել նաև տանը բժշկվողների վրա վերահսկող մարմին, բժշկի դեկավարությամբ:

Այստեղ պիտի մտնեն բժշկությանը ծանոթանհատներ (բժշկական ուսանողներ, բուժակներ և այլն):

Վերահսկիչի աշխատանքը տարվում եւ այսպես. հավատարմատար բժիշկը «տեղեկության» հիման վրա, ջոկում եւ կասկածելի դեպքեր և հիվանդի տունն եւ ուղարկում վերահսկիչի հիվանդի տունն եւ ուղարկում վերահսկիչին, տալով նրան կարևոր հրահանդներ:

Վերահսկողություն տանը պառկած նիվանդների վրա

Հիվանդը պիտի կատարի բժշկի բոլոր պատվերները, իսկ ապահնաբրկում պիտի հսկի,

ուստի և անհրաժեշտ ե կազմակերպել տան հիշվանդի հակողությունը:

Այստեղ վերջինս ունի հետևյալ նպատակը:

1) Ապահովագրվածի դրության հետ ծառնոթանալ:

2) Հսկողություն բժշկող բժշկի պատվերների կիրառման վրա և

3) Կորվ սիմուլիացիայի դեմ:

Այս վերահսկողությունը կատարվում է հավատարմատար բժշկի կամ այդ նպատակի համար հրավիրված հատուկ աշխատակիցների միջոցով:

Այստեղ կրկնակի ստուգում ե տեղի ունենում՝ առաջինը յեղել ե հենց սկզբից բժ. վերհանձնաժողովում, յերբ սիմուլիանտը յեկել եր հայտնելու իրեն գոյություն չունեցող հիվանդության մասին:

Այստեղ նա կարող եր այս կամ այն ճանապարհով դուրս պրծնել և արձակուրդ ստանալ. «Փորձված ու սովորած սիմուլիանտին մերկացնելը հեշտ չե»—լինում են սխալմունքի դեպքեր:

Յերկրորդ ստուգումը տեղի յե ունենում արդեն տանը, վորտեղ սիմուլիանտը՝ «իրենքարքով կարող ե ցույց տալ, վոր խարել ե բժ. հանձնաժողովին»:

Յենթադրենք, վոր նրան պատվիրված ե յեղել ինչ վոր բուժում, իսկ նա չի կատարել. ինչ պիտի այս ցույց տա, այն, վոր նա կամ զիտակից չե, կամ չափազանցրել ե իր հիվանդությունը:

Սիմուլիացիայի դեմ կովելու համար տան հսկողությունը պիտի համարել ամենից ոգտակար միջոցը, բայց ստուգել տանը բոլոր հիվանդներին, ինարկե անհնար ե. դրա համար այս ստուգումը կատարվում է չոկելով:

Վերահսկիչները ջոկում են ստացած տեղեկություններից 10—15 տոկոս: Այս ջոկումը չպիտի պատահական բնույթ կրի, թե չե նա նպատակին չի հասնի:

Ընկերական վերահսկողություն

Բացի հավատարմատար բժիշկների տնային այցելություններից, տեղերում բուժ. մարմինների ու ապահովարկների ներկայացուցիչներից հիմնվում են հանձնաժողովներ, վորոնք հիվանդների հետազոտում են կատարում, սիմուլիացիայի դեպքեր հայտնաբերելու համար:

Բայց այդ հետազոտության արդյունքները շատ քիչ յեղան ապահովագրական փորձն ամելի խորն ե համոզում, վոր սիմուլիացիայի դեմ

պիտի կովել վոչ միայն բժ. հանձնաժողովներդ կամ բժ. վերահսկիչի հոկողությամբ, այլ այդ աշխատանքը պիտի տանել նաև, այսպես կոչված, «ընկերական վերահսկողությամբ», յերբ ապահովագրածներն իրենք ցույց են տալիս ապահուածարկին չարաշահության ու սիմուլիացիայի դեպքեր:

Ի՞նչպես այդ պիտի կիրառել կյանքում և ի՞նչ կոտացվի դրանից, ցույց կտա ժամանակը, եսկ այժմ պիտի զբաղվել ընկերական վերահսկողության կազմակերպումով:

Նա կարող է կատարվել ինքնակամ, յուրաքանչյուր միության անդամի, յուրաքանչյուր ապահովագրական գործչի միջոցով:

Անա «ընկերական վերահսկողության» աշխատանքի մի քանի դեպքեր: Որբինսկ քաղաքի գարեջրի պահեստի բանվոր Խոխլովը վորոշեց, վոր վաս չեր լինի «հիվանդանալ». գանգատվեց բժշկին կրծքի ցավից, աչքերի սկանալուց և ամենորյա փորահարինքից:

Ստանալով հիվանդության թերթիկը, նո մնաց աշխատանքի մեջ: Պահեստում վոչ մի խոսք, աշխատում եր, կարծես վոչինչ չեր պատահել: Աշխատանքից ազատելու ժամանակը լրացավ և Խոխլովը գնաց գրասենյակ, վորպեսզի հիվանդության թերթիկը ստորագրեն.

«Թող գույի կղբայր, այդ գործը հիմարություն մի անի», — պատասխանեցին նրան: Սակայն Խախլովը առանց նրանց ստորագրության յոլագնաց, ինքը ձեռք քաշեց հաշվապահի տեղ: Կոմիտեն հաստատեց և Խախլովը գրամմերը ստացավ սոցապղանձարկղից: Նույն ժամանակամիջոցի համար ստացավ նույնպես իրեն աշխատանքի վայրից: Այդ մասին իմացան ընկերները և հայտնեցին գանձարկղին, վոր նրան պատասխանատվության յենթարկեն: Միթե այս գեղքը կրկին մի անգամ չի ապացուցում, վոր իրենք ապահովագրվածները պիտի մասնակցեն սիմուլիացիայի դեմ կովին:

### Սոցիալական ապահովագրության պրոպագանդան

Քանի վոր սիմուլիացիան մեծ մասամբ արդյունք է հանդիսանում ապահովագրական անգրագիտության և ապահովագրվածների անգիտակցության, նրա դեմ կռվելու գլխավոր գենքը պիտի համարել ապահովագրական պրոպագանդան: Այդ նպատակի համար պետք կգան կինո նկարներ, դասախոսություններ, բանվորական բազմամարդ ժողովներում զեկուցումներ, դրաւյցներ և բացատրություններ, թե ինչպիսի

վաս են հասցնում ապահովագրական գործին սիմուլիանտները։ Լուսավորության ձգտումը մեծ է։ Առողջապահության մասին դասախոսությունները գրավում են ունկնդիրների մեծ բազմություն։ Ինչու նույնը չոգտագործել ապահովագրական պրոպագանդայի համար։

### Պատի լրագիրներ

Ապահովագրագածների մեջ ապահովագրական լուսավորության տարածելը, ապգանձարդկների անտեղի ծախսերին վերջ տալու համար ինարկեանհրաժեշտ ե և մեծ ոգուտ կարող են բերել և պատի լրագիրները։ Այստեղ կարելի յեր հրատարակել և կեղծիքների անհրաժեշտ հայտնաբերված դեպքերը։ Այսպիսի միջոցը կարող եր սիմուլիանտի հույսը կտրել, իրեն գործեանձողությունից ունպատակին հասնելու ձգտումից։

### Ցուցադրական դատարաններ

Զամասկվորեցկի շրջանային կոնֆերենցիան առաջարկում ե քաղաքներում հիմնել ցուցադրական դատական պրոցեսներ թերթիկավորներ և քեֆի համար ման յեկողների, սիմուլիանտ-

ների և նրանց ոգնողների դեմ։ Այս միջոցը կարող ե զրավել բանվորների հոծ մասսա և ցանկալի յե հաճախ կիրառել, քանի վոր նա ունի դաստիարակչական նշանակություն։ Մոտ ժամանակներս ժիտումիբի 200 գործարանային բանվորները, յուրաքանչյուր ամիս հիվանդացել են 300 որ։ Ապահովագրական գանձարկղը այդպիսի մեծ թվով հիվանդների պատճառը պարզելիս, այդ գործարանում հայտնաբերել ե հիվանդ ձևացող սիմուլիանտներ։ Նրանցից մեկը ունեցել ե սեփական կոշկակարանոց և հաճախ հիվանդացել ե։ Այդ բանվորի դեմ ապահովագրական գանձարկղը միության հետ միասին դատ են բացել, վորը վորոշել ե սիմուլիանտին զրկել գանձարկղից և բուժբաժնից ամեն տեսակ նպաստ ստանալուց ու հեռացնել նրան միությունից յերեք ամսով։ 1924 թ. աշնանը Ճարիշին քաղաքի „Ընկած Հերոսների“ ակումբում դատվում ելին սիմուլիանտ բանվորները Գործը սկսվում ե այսպես Դատարանի նախագահը կարգում ե մեղագրական յեզրակացությունը, վորաբեզ ցույց ե տալիս բանվոր դաստիարակի նվաճումները, ապգանձարկղի կարենությունն ու դերը և սուտ հիվանդ ձևացող մարդկանց անթույլատրելի վարունքը։ Դատարանի առաջն են 2 բանվոր և մի բանվորուհի։

Ապգանձարկղի տվյալների հիման վրա այդ ընկերները շատ կարճ ժամանակամիջոցում հիվանդացել են 64—75 որ։ Ինչպես ցույց են տվել վկաները հիվանդությունը միշտ զուգագիպել և աշխատավարձ ստանալու որին և տեղել ե մի շաբաթ ու ավելի։ Հարցաքննելով վկաներին, լսելով մեղագրողի և պաշտպանի ճառերը դատարանը վորոշել և յերկու բանվորներին տեղի լրացրի միջոցով հանդիմանություն անել, իսկ բանվորաւնուն՝ բանվորական ծագում չունենալու պատճառով հեռացնել միությունից ու արձակել աշխատանքից։

### Բանրդակիցներ

Ապահովագրական մարմինների աշխատանքը բանվորների ու ծառայողների կյանքում առաջնակարգ նշանակություն ունի, մանավանդ վոր ապգանձարկղների գործունեյության մասին թղթակցություններ շատ սակագ են յերեւում կենտրոնական լրագիրներում։ Բանթղթակիցները շատ թույլ են կապած սոցիալական ապահովության աշխատանքներին։ Ինչու բանթղթակցի հեռատես հայացքը հաճախ չգցել կյանքի և այդ կարևոր կազմակերպությունների վրա, իսկ նրա արդարադատ գրչին՝ բնչու

չորել „Ճշմարիտ պատկերի մեջ“, ինչպես նրա թերությունները նույնպես նվաճումները։ Բանթղթակիցն աշալուրջ պիտի հետեի, վորպեսզի զանձարկղներից նպաստ ստանան միայն իսկական հիվանդները։ Անհրաժեշտ ե բացատրել առանց կարիքի ապահովագրական սիջոցներից ոգտվելու անթույլատրելի և վնասակար լինելը։ Նա պիտի իմանա թե արդյոք բանվորները բավականաչափ յուրացըրել են սոցիալական ապահովագրական նպատակն ու նշանակությունը և ոգնի նրանց պարզաբանելու մութ հարցերը։

Ընկեր բանթղթակիցներին անհրաժեշտ ե հիշել, վոր սոցիալական ապահովագրությունը Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներից մեկն ե։ Պետք ե միշտ զգաստ լինել պահպանելու այդ նվաճումը։ Աշխատանքի այս ասպարեզի բանթղթակիցների համար դա մի խնդիր ե, վոր պահանջում ե բազմակողմանի լուսաբառում մամուլի միջոցով։

Գործուրկումների մասնակցությունը սոցապահովագրության աշխատանքներին

Մ. Դ. Արհ. Միությունների Խորհուրդը իրեն շրջաբերականով, ուղղած Մոսկվայի ու նահանգի բոլոր նահանգական բաժիններին՝

գավարություններին և գործարկոմներին, գործի յել կոչում արհեստական ստորին բոլոր բջիջներին։ Պետք է լավացնել հիվանդ բանվորների ապահովումը, պայքարել սիմուլիացիայի դեմ և հասնել առողջ ընկերական վերահսկության կիրառմանը։

Գործարկոմները պիտի ամրացնեն ապգանձարկոների ֆինանսական դրությունը, քանի վոր վերջիններս ծանր վիճակում են ապրում։ Ապահովագրական վճարների իջեցումը, տնտեսական մարմիններից ունեցած մեծ պարտքերը և ապգաների անկանոն և ուշացումներով մուծելը մի կողմից և մյուս կողմից այն, վոր տմառային արձակուրդները սկսվելուն պես սովորաբար աճում են նպաստ խնդրողների թիվը, գալիս են ասելու, վոր առանձնապես ամառը անհրաժեշտ է ծրագրված կոիվ մղել սիմուլանտների դեմ։ Պետք է բացատրել բանվորներին ու ծառայողներին, վոր սոցապահովագրության ֆինանսների հիմքերի փորումը սպառնում է նպաստների նորմաների իջեցմանը։ Գործարկոմները ամբողջովին և նույնպես նրանց աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները գանձարկոների լրազորների հետ միասին աշխատանքի վրա պիտի մեծ ուշագրություն տալով գանձ-

արկղին սիմուլիացիայի դեմ կովելու համար։ Փորձարանային կոմիտեները կարող են հետեւել հիվանդներին, բոնել նրանց անկանոն կերպով ապահովագրական միջոցներից ոգտվելու մեջ, պատասխանատվության յենթարկելնրանց, կասկածելի դեպքերում տեղեկացնել ապգանձարկոներին և այդ մասին հայտնել ձեռնարկության բոլոր բանվոր ծառայողներին։ Կեղծողների ու սիմուլիանտների հարցը դնել ընդհանուր ժողովներում, խայտառակել մամուլում կամ նրանց ցուցակը կպցնել աչքի ընկնող տեղում։

### Կոսակցական բջիջները

Սրանք նույնպես կարող են իրենց վրա վերցնել սիմուլիանտների հայտնաբերելի շահագործությունները ստացած արձակուրդի ոգտագործման ժամանակ, կարող են ստուգել հիվանդության թերթիկների և աշխատավարձի ժամանակակից տվյալների մեջ ապահովագրական լուսավորության մասին գասախոսությունների ու գըականության միջոցով։ Նույնպես պայքարի համար ոգտակար կարող ելինել խոշոր ձեռնար-

կություններին կից կուսակցական ու արհեռտակցական ակտիվ աշխատակիցներից կազմված ապահովագրական բջիջները։ Գործարանային կոմիտեյի միջոցով սրանք կապված կլինեյին մի կողմից ապգանձարկղի և մյուս կողմից բանվորական լայն մասսայի հետ։

Աշխատանի պահապանության  
հանձնաժողովներ

Աշխատանքի պաշտպանության մարմինները պետք են սերտ կապված լինեն ապգանձարկղի բժշկական ու վարչատեսական մարմինների հետ։ Յենթադրենք մի վորեւե գործարանում բոլորովին չեն տվել մասնագիտական հագուստ կամ ժամանակին չեն տվել ձեռնոցները թե մեկը և թե մյուսը վատ կարող են ազգել բանվորների առողջության վրա։ Զկա ձեռնոցներ—բանվորի ձեռքերը պիտի վնասվեն, վարել հետեւանքով սովորված պիտի լինենք ազատել նրան աշխատանքից, յերբեմն յերկու շաբաթ և ավելի ժամանակով։ Այսպիսով մի զույգ ձեռնոց ժամանակին չտալը գանձարկղի և գործարանի վրա թանգ ենստում։ Աշխատանքի պաշտպանությունը մի շարք հարցերի պարզաբանման պիտի նպաստի, քանի վոր կարող ե տալ

յուրաքանչուր դժբախտ դեպքի մանրամասն նկարագրությունը և այդ դեպքից առաջացած հետեւանքների մասին ձգրիտ տեղեկություններ։

Բուժարաններ

Խոշոր ձեռնարկություններում բուժարանները պետք են հիվանդությունների հատուկ հաշվառում ունենան։ Այդպիսի հաշվառումը շատ բան կարող է պարզել, որինակ. կամ արդյոք ձեռնարկություններում սիմուլացիա, վորքան բավարար ե դրված աշխատանքի պաշտպանությունը և նույնպես բժշկական ոգնությունը։

Բժշկական Վերահսկիչ Հանձնաժողովներ

Սրանք իրենց աշխատանքով քիչ ոգուտ չեն բերել։ Հայտնի յե որինակ, վոր Տուլսկի նահանգում խիստ տարածված ե սիմուլիացիան, բայց արմատախիլ եր արված բժշկական Վերահսկիչ Հանձնաժողովների լավ գործունեյությամբ և տնային վերահսկողության ուժեղացմամբ, վորտեղ վերահսկիչները հանդիսանում ենին իրենք բանվորները։

## Ա կ ու մ բ ն ե ր

Սոցապահովագրության պրոպագանդայի համար առաջին հերթին պիտի ոգտագործվեն ակումբները։ Այստեղ պետք է պարբերական դասախոսություններ դնել ապահովագրական մարմինների աշխատանքների մասին։ Վերջապես ակումբների ծրագրի մեջ պետք է մտցնել յերեկոնների կազմակերպումը «Հարց» ու պատասխանով» և սիմուլիանտների դեմ դատեր կազմակերպելը։ Յավալի յե, վոր ակումբի գրադարաններում շատ քիչ գրքեր, բրոցյուրներ և պլակատներ կան սոցապահովագրության վերաբերյալ։

## Ապահովագրական գանձարկելեր

Սիմուլիացիայի դեմ արագ ու հաջող կովի համար ապահովագրական դանձարկները իրենց վրա պիտի վերցնեն հրահաննգչական աշխատանքը, այն ե բացատրել պրոլետարական ակտիվին (Քջիջներին, տեղկոմներին, աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներին, պատգամագորների ժողովին և բանթղթակիցներին) կովի մեթոդներն ու միջոցները։ Յուրաքանչյուր պրոֆաշխատակից, յուրաքանչյուր հիմնարկի վարիչ

պիտի յուրացնի Մոսկվայի ապահովագրկղների խորհրդակցության նախագահության հետևյալ յեղակացությունը։ «Սոցիալական ապահովագրության գործը, վորպես պրոֆեսիոնալ աշխատանքի մի մաս, պահանջում է մշտական ուսերտ կապ մասսաների հետ՝ առանց սրանց մասնակցության, նաև անհիմն ե»։

## Բնակարանային ընկերություններ

Կարծիքներ կային, վոր այս գործին պիտի լծել և մեր բնակարանային ընկերություններին, վորոնք կարող են պարտավոր են առանձնապես փոքրիկ տներում հետաքրքրվել իրենց բնակիչների ճիշտ արձակուրդ ստանալով և ստուգել այդպիսիները։ 1925 թ. փետրվարի վերջին Մոսկվայի նահանգական Սոցիալական Ապահովագրության կոմիտեն դիմեց բնակարանային ընկերության բոլոր ճյուղերին, անային կոմիտեներին և բոլոր քաղաքացիներին մի խնդրով, այն ե անկանոն և շահագիտական նպատակով գանձարկից ստացած նպաստների բոլոր դեպքերի մասին հայտնել Սոցապ. ննհանգ. կոմիտեյին, վորից հետո միջոցներ ձեռք կառնվեն նպաստից զրկելու։ Դիմումը վերջանում է այսպիսի խոսքերով։ «Միայն բոլոր հասարակական կազ-

մակերպությունների ակտիվ աջակցությամբ կարելի յե կովել գանձարկղից ապորինի նպաստ ստացողների դեմ»:


### Դասընթացքներ ու դպրոցներ

Հ. Կ. Արհ. Մ. Խորհրդին կից կամզ.—բաժինը անհրաժեշտ ե գտել կիրառել այսպիսի միջոց։ Արհեստակցական կազմակերպությունների կուլտաշխատանքների ծրագրը մշակելիս, մըտցնել այդ ծրագրի մեջ նույնպես ապահովագրական լուսավորության աշխատանքը, իսկ գտարնթացքներում ու դպրոցներում մացնել պրոֆաշխատակիցների կողմից ապահովագրական խընդիրների ուսումնասիրությունը։ Ապահովագրական լուսավորության տարածումը անկասկած բարոյապես կազդի ապահովագրված մասսաների վրա և ավելի գիտակից կըդարձնի նրանց դեպի սոցիալական ապահովագրական գործը։

Անա ինչպիսի բազմատեսակ աշխատանքներում կարող ե արտահայտվել մասսաների մասնակցությունը ապկանձարկղների դրամական միջոցների պահպանման գործին, վորպեսզի իզուր տեղը չըվատնվեն այն միջոցները, վորոնք պատրաստված են իսկապես կարիք ունեցող բանվարներին ոգնություն ցույց տալու համար։

Պըոլետարական ակտիվի վերոհիշյալ առանձին խմբակները կազմում են մի միություն՝ ձգտող մի ընդհանուր նպատակի—«Յուրաքանչյուր բանվոր, ծառայողի պարտքն ե ամբողջ ուժով պահել սոցիալական ապահովագրությունը և աջակցել վերացնելու այն ամնեը, ինչ վոր կարող ե վնասել նրան»։

---



«Ազգային գրադարան



NL0211338

44.127

---

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

---